Azg
Ազգ
7 ՅՈՒԼԻՍ 2004 ՇԱԲԱԹ 124 (3046)

Հայկական բանակը լավ զինված է եւ համալրված

ԵՐԵՎԱՆ, 6 ՅՈՒԼԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Անցած գիշեր հայ-ադրբեջանական սահմանի Նոյեմբերյանի հատվածում որոշ լարվածություն է առաջացել, սակայն ադրբեջանական կողմից բացված կրակը հաջողվել է կասեցնել: Այս մասին լրագրողներին հայտնել է Հայաստանի զինված ուժերի գլխավոր շտաբի պետ, ՀՀ պաշտպանության նախարարի առաջին տեղակալ գեներալ-գնդապետ Միխայել Հարությունյանը:

Ըստ գեներալ-գնդապետի, սխալ կլիներ ենթադրել, որ ղարաբաղյան հակամարտության գոտում հրադադարի ռեժիմի հաստատումից ի վեր ադրբեջանական բանակը չի փոխվել: Նշելով, որ Ադրբեջանը կատարելագործում է իր զինված ուժերը, Միխայել Հարությունյանը հայտնեց, որ ադրբեջանական կողմը գիտի նաեւ հայկական բանակի մարտունակության մասին: Հակառակ դեպքում, ինչպես ընդգծել է գլխավոր շտաբի պետը, ադրբեջանցիները կրկին պատերազմ կսկսեին: Գեներալը հայտնեց, որ պատերազմ սկսողն այն տանուլ կտա:

Ըստ Միխայել Հարությունյանի, Հայաստանի զինված ուժերը հանդերձված են անհրաժեշտ սպառազինությամբ եւ համալրված են բարձր պրոֆեսիոնալիզմ ունեցող սպայակազմով, որի 90%-ից ավելին ունի բարձրագույն ռազմական կրթություն:

Հաջողակ բիզնեսը շարունակում է խուսափել շահութահարկ վճարելուց

Կփոխվի՞ պատկերն այս տարի օրենքի փոփոխությունից հետո

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Գործող օրենսդրության համաձայն, հրապարակվեց 2003 թ. 1 մլն դրամից ավելի հարկային վնաս հայտարարագրած կազմակերպությունների ցանկը: Խոսքը շահութահարկի վճարում չկատարած ընկերությունների մասին է: Եթե այս ցանկը համեմատենք նախորդ տարվա համանման ցանկի հետ, ապա կտեսնենք, որ առկա են որոշակի, բայց ոչ էական փոփոխություններ: Ընդհանուր պատկերն անփոփոխ է:

Փոփոխություններից արժե հիշատակել այն փաստը, որ 2003 թ.-ին, ի տարբերություն 2002 թ.-ի, շահութահարկ չվճարողների թիվն 801-ից նվազել է, հասնելով 597-ի: Ցանկից այս անգամ բացակայում են մի շարք հայտնի ընկերություններ, որոնք, չնայած հաջող բիզնես ունենալուն, մշտապես տեղ էին գրաղեցնում այստեղ: Խոսքը «Կոկա-կոլա բոթլերս Արմենիայի», «Վեդի ալկոյի», «Գեսամեջ», «Արաֆս» թռչնաֆաբրիկաների, «Վալենսիայի» եւ մի շարք ընկերությունների մասին է: Հասկանալի է, որ որեւէ մեկը չի հավատում նրանց, ինչպես եւ ցանկում գտնվողների մեծ մասի՝ վնասով աշխատելու հավաստիացումներին: Սակայն օրենսդրական անկատարությունն ու հարկային մարմինների գիտակցված կամ չգիտակցված անզորությունը այդ հնարավորությունն ընձեռում են:



Տես էջ 3

ԱՇՏԱՐԱԿՈՒՄ Է ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՆԳՐԵՍԸ

Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցուն պատռնում է լիակատար կործանում

Համաշխարհային հայկական կոնգրեսի հայտարարությունը

Համաշխարհային հայկական կոնգրեսը տագնապով ընկալեց այն լուրը, որ միջնադարյան հայկական ճարտարապետության եզակի հուշարձանին՝ Վանա լճի Աղթամար կղզում գտնվող Սուրբ Խաչ եկեղեցուն, պատռնում է լիակատար կործանում:

Այդ նշանավոր տաճարը կառուցվել է 915-921 թթ. Գագիկ Ա-ի կառավարման ժամանակաշրջանում: Եկեղեցու ներքին պատերը եւ նոկնիսկ գմբեթը նկարազարդվել են գեղարվեստական մեծարժեք որմնանկարներով:

Ինչպես վկայում է թուրքական «Զաման» թերթը, ներկայումս միջնադարյան հայկական ճարտարապետության այդ անկրկնելի հուշարձանն այն աստիճան քայքայված է, որ շուտով տաճարից կմնան միայն ավերակներ: Եվ դրա պատճառը ոչ միայն ժամանակն է, այլեւ քամահրական վերաբերմունքը մշակութային ժառանգության անչափ արժեքավոր այդ հուշարձանի նկատմամբ:

Ճարտարապետության այդ հայտնի հուշարձանը տակավին ներառված չէ համաշխարհային ժառանգության ցանկում կամ վտանգված պատմական հուշարձանների ցուցակում: Համաշխարհային հայկական կոնգրեսն անհրաժեշտ է համարում ամեն ջանք գործադրել համաշխարհային մշակույթի եւ պատմության ժառանգության այդ եզակի նմուշը վերջնական կործանումից փրկելու համար: Դա Թուրքիայի, որպես եվրոպական քաղաքակրթության պետությունների հետ սերտ միասնացման ձգտող պետության գործն է: Դա նաեւ Թուրքիայի պատմական պարտքն է հազարամյակներով տվյալ տարածքում ապրած հայ ժողովրդի հանդեպ:

Այդ հուշարձանի, ինչպես նաեւ հայկական ժառանգության հարյուրավոր ուրիշ հուշարձանների ճակատագրի հարցը սկզբունքորեն կարեւոր նշանակություն ունի հայ ժողովրդի հետ թուրքական պետության հարաբերությունների մռայլ անցյալին քաղաքակիրթ ձեւով վերջ դնելու համար:

Համաշխարհային հայկական կոնգրեսը ընդգծում է Թուրքիայի Հանրապետության ներկայիս պետական սահմաններում գտնվող տարածքներում հայկական պատմական հուշարձանների պահպանման կարեւորությունը համայն մարդկության համար եւ Թուրքիայի Հանրապետության ու Հայաստանի Հանրապետության կառավարություններին կոչ է անում ՅՈՒՆԵՍԿՕ-ի միջազգային փորձագետների մասնակցությամբ բանակցություններ անցկացնել այդ հուշարձանների վերականգնմանն ուղղված միջոցառումների մշակման եւ իրականացման նպատակով:

Մենք միաժամանակ Հայաստանի եւ Թուրքիայի կառավարություններին առաջարկում ենք անհապաղ ձեռնարկել կոնկրետ քայլեր, որոնք թույլ կտան վերականգնել Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցին՝ անպայման պահպանելով այդ տաճարի պատմական նկարագիրը եւ մշակութային նշանակությունը:

Հայկական պատմական հուշարձանների պահպանման աշխատանքներին հայ եւ թուրք գիտնականների ու ճարտարապետների համատեղ մասնակցությունը բացարձակապես անհրաժեշտ է, քանզի խոսքն այդ ժառանգության պատմական նկարագիրը նախատեղծ տեսքով վերականգնելու մասին է:

Համաշխարհային հայկական կոնգրեսը պատրաստակամություն է հայտնում իր բոլոր հնարավորություններով նպաստել այդ հարցերի լուծման եւ գալիք սերունդների համար մեր ընդհանուր ժառանգության պահպանման գործի առաջընթացին:

ԱԲԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Համաշխարհային հայկական կոնգրեսի նախագահ,
ՅՈՒՆԵՍԿՕ-ի հաղթակերտությունների երկխոսության զարգացման գծով բարի կամքի դեսպան

Ալեխ Եմենիջյանը Երեւանում

Երեկվանից անձնական այցով իր ընտանիքի հետ Հայաստանում է գտնվում MGM կինոստուդիայի ընդհանուր տնօրեն, MGM կազինոների վարչության անդամ, Քըրք Քըրքորյանի «Լինսի» բարեգործական հիմնադրամի վարչության անդամ եւ Միացյալ հայկական ֆոնդի վարչության ատենապետ Ալեխ Եմենիջյանը: Մեծ գործարարը եւ բիզնեսի հայտնի կազմակերպիչը, որի լուսանկարը 2001 թ. մայիսին տեղ էր գտել ամերիկյան «Ֆորբս» ամսագրի առաջին էջում, առաջին անգամն է լինում Հայաստանում: Նրա գործունեությանն ավելի մոտիկից կարելի է ծանոթանալ 3-րդ էջում:

Մեր վաղվա համարում

«Ազգի» վաղվա համարում ընթերցողները կարող են ծանոթանալ Երեւանի «Զրմուղ-կոյուղի» ընկերության կողմից սպասարկվող տարածքներում ջրամատակարարման գրաֆիկներին ըստ առանձին՝ Աջափնյակ, Արաբկիր, Ավան-Առինջ, Դավիթաշեն, Էրեբունի, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա, Շենգավիթ, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Նուբարաշեն, Քանաքեռ-Զեյթուն համայնքների եւ մերձակա գյուղական համույթների:

Թուրքիայում հայ կանանց սիրում են զբաղվել մարմնավաճառությամբ

Հայաստանի եւ Թուրքիայի դիվանագիտական հարաբերությունների բացակայությունը հաճախ անտանելի պայմաններ է ստեղծում հարեւան հանրապետություն այցելող Հայաստանի քաղաքացիների համար: Սեւծովյան տնտեսական համագործակցություն (ՍԾՏՀ) կազմակերպությունում (նստավայրը՝ Ստամբուլ) Հայաստանի ներկայացուցիչ Արսեն Ավագյանն ասում է, որ ամեն օր ներկայացուցչություն են դիմում 3–4 հայեր, որոնց ձեռքից սիրողաբար վերցրել են անձնագրերը, եւ նրանք չեն կարողանում վերադառնալ Հայաստան:

«Ուզում եմ կրկնել. մի՛ հավատացեք նրանց, ովքեր վստահեցնում են, թե գնացեք Թուրքիա եւ բարձր վճարվող աշխատավարձ կգտնեք: Նման խոստումների մեծ մասն ավարտվում է ցավալի պատմություններով: Թուրքական սահմանը հատելուց հետո Հայաստանի քաղաքացիներից պահանջվում է անձնագրերը, գումարը, սիրում են զբաղվել մարմնավաճառությամբ», ասում է Ավագյանը:

Վերջերս երկու հայուհիների համոզել էին գնալ Թուրքիա եւ բարձր աշխատավարձով հավաքարարություն անել մի հայի ընտանիքում: Սամբուլում վերցրել էին նրանց անձնագրերը եւ սիրել զբաղվել մարմնավաճառությամբ: Այս խաբված կանանց հաջողվել է դիմել ՍԾՏՀ-ում ՀՀ ներկայացուցչություն եւ միայն ճնշման տակ է հաջողվել հետ ստանալ անձնագրերը:

Մեկ այլ դեպք. մի հայ երիտասարդի համոզել էին, որ Թուրքիայում 15 հազար դոլարով կարող է վաճառել երիկամը: Անձնագիրը ձեռքից խլելուց հետո թուրքերը փորձել էին անվճար ստանալ երիկամը: Երիտասարդին հաջողվել էր փախչել ու դիմել ներկայացուցչություն:

Ավագյանն ասում է, որ սրանք այն դեպքերն են, երբ խաբեության զոհերին հաջողվել է կապվել ներկայացուցչության հետ, շատ դեպքերում այսպիսի պատմություններն ավարտվում են ողբերգությամբ:

«Քանի որ Թուրքիայի հետ չունենք հյուպատոսական հարաբերություններ, ցավոք, չենք կարող Թուրքիա ժամանած Հայաստանի քաղաքացիների շահերը պաշտպանել, բայց ներկայացուցչությունն անում է հնարավորը՝ պաշտպանելու նրանց շահերը: Գումար է տրամադրվում, օդանավի տոմս գնվում, որպեսզի նրանք կարողանան տուն վերադառնալ», ասում է Ավագյանը: Ռ. Հ.

ՄՈՍԿՎԱ

Վախճանվեց ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Պավել Լիսիցյանը

ՄՈՍԿՎԱ, 6 ՅՈՒԼԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Կյանքի 93-րդ տարում վախճանվեց ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Պավել Լիսիցյանը: Նա մահացել է ամառանոցում, «Էխո Մոսկվի» ռադիոկայանի եթերում հայտնել է Մեծ թատրոնի օպերային կոնցերտմայստեր Կոնստանտին Կոստիրեւը: Պավել Գերասիմի Լիսիցյանը խորհրդային օպերային առաջատար երգիչներից մեկն էր (բարիտոն): Նա ծնվել է 1911 թվականի նոյեմբերի 6-ին Վլադիկավկազում: Հայրենական մեծ պատերազմի ժամանակ ավելի քան 500 համերգներ է տվել ռազմաճակատներում եւ թիկունքում: Պարգեւատրվել է «Խիզախության համար» եւ «Կովկասի ազատագրման համար» մեդալներով:

1940-ից մինչեւ 1966 թվականը նա եղել է Մեծ թատրոնի մենակատար, կատարել Ելեցկու, Օնեգինի, Մազեպայի, Ռոբերտի (Չայկովսկու «Պիկովայա դամա», «Եվգենի Օնեգին», «Մազեպա», «Իոլանտա»), Ժերմոնի, Ամոնասրոյի (Վերդիի «Տրավիատա», «Աիդա»), Էսկամիլիոյի (Բիզեի «Կարմեն»), Թաթուլի (Սպենդիարյանի «Ալմաստ»), Արշակ Երկրորդի (Չուխաջյանի «Արշակ Երկրորդ»), Նատոլեոնի (Ս.Պրոկոֆեւի «Պատերազմ եւ խաղաղություն») եւ այլ դերերգեր: Պ.Լիսիցյանը հանդես է եկել եւ որպես համերգային երգիչ: Արտիստը Մեծ թատրոնի բեմում հանդես է եկել 1800 ներկայացումներում, մոտավորապես նույնքան հյուրախաղերի ընթացքում՝ ԽՍՀՄ առանց բացառության բոլոր օպերային թատրոններում:

Ինչպես հիշեցնում է «Նովոստի» գործակալությունը, 1960 թվականին Պ. Լիսիցյանը խորհրդային երգիչներից առաջինն է հանդես եկել Նյու Յորքի «Մետրոպոլիտեն օպերայում» «Աիդա» ներկայացման մեջ:

«Առանց նախադայմանների հարաբերություններ հաստատել չի նշանակում հարցերն ուրանալ»

Արա Քոչունյանը հայ-թուրք շփումներում կարեւորում է վստահության խնդիրը

Տայկական մամուլում ամենահին պարբերականի՝ Սամբուլում լույս տեսնող «Ժամանակ» օրաթերթի խմբագիր Արա Քոչունյանի կարծիքով, հայ-թուրքական հարաբերություններում նախ եւ առաջ կարեւոր է կողմերի միջեւ փոխվստահության հարցը: «Եթե կողմերը կարողանան բավարար երաշխիքներ տալ, որ անկեղծ մտադրումով ձեռնարկում են այս գործընթացը եւ իսկապես ցանկանում են ինչ-որ տեղ հասցնել բարիդրացիական հարաբերությունները, դրանից հետո, ինձ թվում է, ավելի հեշտ կլինի: Այս փուլում վստահության պակաս կա, կասկածամտությունն է, որ արգելում է երկու կողմերին էլ», ասում է Քոչունյանը:

Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման ճանապարհին, ըստ «Ժամանակի» խմբագրատեսի, միայն Թուրքիան չէ, որ պիտի դիմի քայլերի: «Միջազգային հաղորդակցության տրամաբանությունը մեզ մղում է մտածելու, որ երբ երկու հարեւանների միջեւ խնդիր կա, երկու կողմերն էլ պիտի քայլեր անեն: ՆԱՏՕ-ի գագաթաժողովի օրերին տեղի ունեցավ արտգործնախարարների հանդիպում: Օսկանյանը ասաց, որ երկկողմ հանդիպման գլխավոր հարցը եղել է սահմանների բացումը: Այս պահին առաջընթաց ենք նկատում այն հանգամանքը, որ կողմերը գոնե գիտակցում են միմյանց զգայնությունները, հասկանում թե ինչ խոչընդոտներ կան», ասում է նա:

Քոչունյանն այնքան էլ համաձայն չէ այն տեսակետին, որ միայն Թուրքիան է առաջ քաշում նախապայմաններ. «Երեւանը միշտ ասում է, որ պատրաստ է առանց նախապայմանների հարաբերություններ հաստատել Թուրքիայի հետ: Ըստ երեւույթին, շատ կառուցողական դիրքորոշում է: Կողմերից մեկն ունի իր նախապայմանները, իսկ մյուսն ասում է, որ պատրաստ է հարաբերություններ հաստատել առանց նախապայմանների: Բայց առանց նախապայմանների հարաբերություններ հաստատել չի նշանակում հարցերն ուրանալ»:

Թուրքիան ակնարկում է, որ Երեւանի հետ հարաբերություններ կհաստատի, կբացի սահմանները, եթե Հայաստանը հրաժարվի Հայոց ցեղասպանությունից, ճանաչի ժամանակակից Թուրքիայի սահմանները: Եթե Երեւանը հայտարարի, որ արտաքին քաղաքականության օրակարգից հանում է Ցեղասպանության ճանաչման հարցը, Անկարան ինչպե՞ս կարձագանքի: «Մենք այդ ուղղությամբ հստակ բան չենք կարող ասել, որովհետեւ Հայաստանի անկախության առաջին տարիներին Ցեղասպանության հարցն արտաքին քաղաքականության անմիջական օրակարգում չէր: Բայց այդ շրջանում Ղարաբաղի պատերազմը շատ ավելի առաջնահերթ էր, դրան գումարած հոչակագրի ակնարկները: Դրանք իրենց ազդեցությունն ունեին»:

Քոչունյանն ասում է, որ Հայաստանն ու Թուրքիան պետք է պատրաստեն հարաբերությունների հաստատման հողը: «Գտնվելիք լուծման դեպքում երբեմն չպետք է կողմերից մեկը հաղթող կամ պարտվող լինի: Այստեղ հարցը կողմերի հաշտվելն է, այդ հաշտվելու կամքի դրսեւորումը»:

Թուրքիան Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու համար առաջ է քաշում առնվազն երեք նախապայման՝ Հայոց ցեղասպանությունից հրաժարում, Թուրքիայի սահմանների ճանաչում եւ Ղարաբաղի հարցի լուծում: Այս երեք նախապայմաններից ո՞րն է առավել առաջնային, ինչը թույլ չի տալիս Թուրքիային հարաբերություններ հաստատել Երեւանի հետ: Քոչունյանի կարծիքով, Անկարայի համար կարեւոր է առաջին երկուսը, իսկ երբ Ադրբեջանն էլ մասնակցի գործընթացին, արդեն առաջնահերթությունը մասամբ կգնա դեպի Ղարաբաղի հարցը: Մյուս կողմից, Քոչունյանը կարծում է, որ առաջնահերթություններ դասավորելն այնքան էլ առողջ մոտեցում չէ, քանի որ կարող է գալ մի պահ, երբ «Ղարաբաղի հարցում արձանագրվելիք փոքր առաջընթացը բավարար պատճառ կլինի, որպեսզի հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման ուղղությամբ քայլեր ձեռնարկվեն»:

Անկարայի արտաքին քաղաքականության օրակարգում հայկական հարցը, Հայաստանի հետ հարաբերություններն առաջնային չեն, սակայն ասել, թե դրանք թերագնահատվում են, ճիշտ չէ, հատկապես երբ Թուրքիայի դաշնակից Միացյալ Նահանգները կամ Եվրոմիությունը, որին ձգտում է անդամակցել Թուրքիան, ճնշումներ են բանեցնում վերջինիս վրա: Ինչպե՞ս է Թուրքիան ցանկանում բաց տեսնել Հայաստանի հետ սահմանը, հարաբերություններ հաստատել Երեւանի հետ: «Ես վստահ եմ, Թուրքիան խորքում գիտակցում է, որ հարեւաններից մեկի սահմանները փակ պահելով ոչնչի չպիտի հասնի, որովհետեւ Թուրքիան համաշխարհային մակարդակով պետության ձգտում ունի, Անկարայի բաղձանքն այս ուղղությամբ է: Թուրքիայի նման աշխարհագրական դիրք եւ միջազգային ներգրավվածություն ունեցող երկրի համար բացարձակապես իրատեսական չէ ասել, թե ուրիշների ազդեցությունները չլինեին, Թուրքիան ինչ կաներ: Ժողովրդական լեզվով ասած՝ հինգ մատն էլ նույնը չեն, բայց չի նշանակում, թե ամենափոքրից կարող ես հրաժարվել: Հայ-թուրքական հարաբերությունները պետք է անպայման հաստատվեն գոնե նրա համար, որ Թուրքիան չի ցանկանում Հայաստանի հետ սահմանը փակ պահելով լրացուցիչ ճնշումների ենթարկվել», ասում է Քոչունյանը:

«Ժամանակի» խմբագիրն ասում է, որ ինչքան Թուրքիան սերտացնի հարաբերությունները Եվրոմիության հետ, այնքան պիտի կիսի վերջինիս հեռանկարային նպատակները: «Այսօր արդեն ակնհայտ է, որ Եվրոմիության հեռանկարային նպատակների մեջ Հարավային Կովկասն ունի ինքնուրույն դեր: Թուրքիան լինելով Հարավային Կովկասի սահմանային պետություն, պետք է այդ տարածաշրջանի բոլոր երկրների հետ ունենա հարաբերությունների որոշակի մակարդակ, բոլորի հետ հնարավորինս հավասար հեռավորության վրա մնալ, որպեսզի թե՛ իր հաշվին, թե՛ հանուն Եվրոմիության կարողանա իրապես, հիմնավորված ազդեցություն եւ դերակատարություն ունենալ: Այս ամենը մեզ մղում են այն մտածումին, որ Հայաստանի եւ Թուրքիայի սահմանների փակ լինելն անբնական երեւույթ է: Առաջիկա շրջանում տարբեր հարթությունների վրա պիտի քննարկվի եւ, կարծում եմ, գոնե սահմանների բացման իմաստով հայ-թուրքական հարաբերությունները պետք է կարգավորվեն»:

ԹԱԹՈՒԼ ՀԱՎՈՐԲԱՆ

Սամբուլ-Երեւան

ՄՈՍԿՎԱ

Օսկանյանը Լավրովին հիշեցրել է «Պարսք գույքի դիմաց» համաձայնագիրը

Պաշտոնական այցով Մոսկվայում գտնվող Հայաստանի արտգործնախարար Վարդան Օսկանյանը հանդիպել է իր ռուս գործընկեր Սերգեյ Լավրովին: Ըստ ՀՀ ԱԳՆ մամուլի եւ տեղեկատվության վարչության տարածած հաղորդագրության, «Օսկանյանը զրուցակցի ուշադրությունը հրավիրեց այսպես կոչված «Պարսք գույքի դիմաց» համաձայնագրով արդեն իսկ ռուսական կողմի սեփականությունը հանդիսացող ձեռնարկությունների հնարավորինս արագ վերակենդանացման անհրաժեշտությանը»: Օսկանյանն ասել է, որ դա կնպաստի թե՛ ռուսական կողմի հայաստանյան տնտեսության մեջ ներդրումների ծավալի աճին եւ թե՛ Հայաստանի տնտեսության զարգացմանն ու նոր աշխատատեղերի ստեղծմանը:

Հանդիպման ընթացքում առանձին ուշադրություն է հատկացվել ղարաբաղյան հարցին: Օսկանյանը Լավրովին տեղեկացրել է վերջին զարգացումների, մասնավորապես Ադրբեջանի արտգործնախարարի հետ Պրահայում եւ Սամբուլում կայացած հանդիպումների մասին:

Թուրքերն ու ադրբեջանցիները իրենց ցանկությունները վերագրում են Օսկանյանին

Երեկվա համարում Բաքվի «Էխո» թերթը, վկայակոչելով թուրքական «Զամանին», գրում է, թե իբր Սամբուլում հունիսի 28-ին Հայաստանի, Ադրբեջանի եւ Թուրքիայի արտգործնախարարների եռակողմ հանդիպման ընթացքում Վարդան Օսկանյանը ակնարկել է, որ հայկական ուժերը կարող են հեռանալ ադրբեջանական բոլոր շրջաններից, բացի Լեռնային Ղարաբաղից: «Երեւանը հանձնվելու առաջին ազդանշանն է տալիս» հոդվածում «Զամանը» մեջբերում է Օսկանյանի խոսքերը, որոնք թերթին փոխանցել է Աբդուլլահ Գյուլը. «Մենք կարող ենք ազատել բոլոր տարածքները, բացի Ղարաբաղից»:

Անշուշտ, Օսկանյան-Գյուլ-Մամեդյարով հանդիպման ընթացքում, այլ հարցերից զատ, կարող է քննարկված լինել նաեւ ղարաբաղյան հակամարտության կարգավորման հեռանկարը: Սակայն, մյուս կողմից, խիստ կասկածելի են «Զամանի» մեջբերումները: Եռակողմ հանդիպումը հնարավորինս փակ է պահվում մամուլից, կողմերը պայմանավորվածություն ունեն չհրապարակելու հանդիպման մանրամասները: Եվ այս համատեքստում գրեթե անհավանական է թվում, որ Թուրքիայի արտգործնախարարը մամուլին տրամադրած լինի իր հայ գործընկերոջ խոսքերը:

«Կիլիկիան» Փոթիում է

Հայկական «Կիլիկիա» առագաստանավը բարեհաջող հասավ Փոթիի նավահանգիստ: Նավն արդեն ջուրն է իջեցված, նավաստիները կայմն են ձգում: Երեկ նավապետ Կարեն Բալայանը «Ազգ»-ի հետ հեռախոսազրույցում ասաց, որ մինչեւ շաբաթվա վերջ կավարտեն նախապատրաստական աշխատանքները, կսկսի ճամփորդությունը: «Մինչ նավահանգիստ հասնելը ճանապարհներն այնքան էլ լավը չէին, տեղ-տեղ նորոգում էին», ասաց նա: Պրն Բալայանը հատուկ նշեց վրացական իշխանությունների դրական վերաբերմունքը. «Անբարեկարգ ճանապարհների պատճառով ստիպված ենք եղել գիշերով Թբիլիսի միջով անցնել Վրաստանի պետավտոտեսչության ուղեկցությամբ»:

Ծով դուրս գալուց հետո մոտ 3 օրից «Կիլիկիան» կհասնի Սոչիի նավահանգիստ: Ի դեպ, մեկնարկից նավաստիների հետ է Զորի Բալայանը: Թե մինչեւ որտեղ նա կընկերակցի տղաներին, կորոշի ինքը:

Ն. Մ.

Սիդա Թոփուզյանը հերքում է

Հերքում եմ 2004 թ. հուլիսի 1-ին «Ազգ» օրաթերթում տպագրված՝ «Հետաքննող լրագրողներ» հասարակական կազմակերպության տարածած հաղորդագրությունը, համաձայն որի ինձ աշխատանքից ազատելու պատճառը մեդալի հավակնորդների քննության ժամանակ «ծանկագիր-տեսր» փոխանցելն է: Այս պնդումն իրականությանը չի համապատասխանում: Նման փաստ չի եղել եւ չէր էլ կարող լինել, քանի որ ես ինքս ծանկագրից երբեւէ չեմ օգտվել, իսկ երեխային ծանկագիր փոխանցելը որակում եմ մանկավարժին, առավել եւս կրթության եւ գիտության փոխնախարարին անհարիր քայլ:

Ինչ վերաբերում է «Հետաքննող լրագրողներին», կարծում եմ, որ նրանց առաքելությունը հանրությանը ճշմարտացի եւ փաստացիորեն հիմնավորված տեղեկատվություն տալն է: Մեկ հանգամանք եւս: Մի ամիս շարունակ լրատվական տարբեր միջոցներով երեխաների անունները կամ նրանց ծնողների ու բարեկամների պատշաճները հոլովելը համարում եմ հակամանկավարժական եւ ոչ բարոյական երեւույթ: Դա կարող է դիտարկվել իբրեւ երեխաների իրավունքների խախտում եւ բռնության փորձ նրանց նկատմամբ:

Հարկ եղած դեպքում ցանկացած այլանում ես պատրաստ եմ արացուցել գրածս յուրաքանչյուր նախադասության ճշմարտացիությունը:

ՍԻԴԱ ԹՈՓՈՒԶՅԱՆ

«Օրիֆլեյմ» ընկերությունը ներկայացուցչություն բացեց նաեւ Հայաստանում

Մոտ 60 երկրներում ներկայացուցչություն ունեցող «Օրիֆլեյմ» ընկերությունն այստեղ կգործի նաեւ Հայաստանում: Ընկերությունն արդեն 7 տարի աշխատում է ռուսաստանյան շուկայում, իր արտադրանքը տարածելով ինչպես անկախ դիստրիբյուտորների, այնպես էլ մեծածախ առեւտրացանցի միջոցով, որոնք հնարավորություն են տալիս հասնելու սպառողների առավելագույն քանակի: Այնտեղ դրանց թիվը հասնում է 110 հազարի:

Հիշեցնենք, որ ընկերությունը ստեղծվել է Շվեդիայում, 1967 թվականին, հիմնադիրներն են Յոնաս եւ Ռոբերտ Յոկնիկները, որոնք իրենց առջեւ նպատակ են դրել ստեղծելու բարձրորակ ու մատչելի կոսմետիկական միջոցներ: Ընկերության գիտաարտադրական համալիրը Իռլանդիայի էկոլոգիապես մաքուր շրջանում է՝ Ուիկլոու Հիլզում: Ընկերությունը երաշխավորում է, որ իր արտադրանքը պատրաստվում է բնական բաղադրիչներից, նորագույն տեխնոլոգիաներով, համապատասխանում է որակի եւ շրջակա միջավայրի անվտանգության պահանջներին:

«Երեւան» հյուրանոցում լրագրողների հետ հանդիպման ժամանակ ընկերության տարածաշրջանային մենեջեր Մաթս Պալկիմիքսը եւ Վրաստան -Հայաստան մասնաճյուղի ղեկավար Լեւան Բոկաչավան հայտնեցին, որ ընկերությունը Հայաստանում իրավաբանորեն գրանցվել է անցյալ տարի, այսօր արդեն աշխատում են 5 հազար խորհրդատուներ: «Օրիֆլեյմի» հարուստ տեսականին խանութներում չի վաճառվելու, իրեն հետաքրքրող կոսմետիկական միջոցը պատվիրելուց առաջ գնորդը անպայման պետք է խորհրդակցի ընկերության խորհրդատուի հետ: «Օրիֆլեյմի» կատալոգներ կարելի է ձեռք բերել խանութների կոսմետիկայի բաժիններում:

Ռ.Պ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ԺԲ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
Ֆաքս 374 1 562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am

Գլխավոր խմբագիր
ՅԱՎՈՒՐ ԱՎԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱՎՈՐԵԱՆ / հեռ. 529221

Լրագրողների սենյակ / հեռ. 581841

Համակարգչ. ծառայություն / հեռ. 582483

Շուրջօրյա լրահավաք ծառայություն / հեռ. 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

ԱԶԳ

Ընթացիկ

MGM կինոստուդիայի կախարդը. Ալեխ Եմենիջյան

Ամերիկահայ միլիարդատեր Ջըրf Ջըրfորյանին պատկանող հոլիվուդյան MGM («Մետրո Գոլդուին Մայեր») կինոստուդիան երրորդ անգամ անընդմեջ օրացուցային տարին ավարտում է շահույթով: 11 տարի կորուստներ կրելուց հետո ֆիրման վերստին բարելավել է իր վիճակը: Առաջին հայացքից թվում է, թե MGM կինոստուդիան փրկվել է մի քանի հանրահայտ ֆիլմերի շնորհիվ: Բայց գլխավոր պատճառն ընկերության նոր ղեկավարն է՝ 46-ամյա ֆինանսիստ Ալեխ Եմենիջյանը, որն անցյալում երբեւէ չի աշխատել Հոլիվուդում:

Մոսկովյան «Արմենիա ի միր» պարբերականը նշում է, որ չնայած ավիացիայում, «Քրայսլերում» եւ այլուր կատարած հաջող ներդրումներին, 7,8 միլիարդանոց կարողության տեր Ջըրf Ջըրfորյանը 30 տարի չէր կարողացել հաջողության հասնել Հոլիվուդում: 1969 թ. ձեռք բերելով MGM կինոընկերությունը, նա մի քանի անգամ վաճառեց եւ հետ գնեց այն: 1996 թ. նա ֆրանսիական «Կրեդի լիոնե» բանկից 1,3 մլրդ դոլարով ձեռք բերեց MGM-ի բաժնետոմսերի 81 տոկոսը: 1999 թ. MGM-ը գնեց «Պոլիգրամ» ստուդիայի խոշորագույն կինոգրադարանը:

Առավաճառի գործարքներից հետո MGM-ը կորցրեց իր կինոարխիվի մեծ մասը եւ չէր կարողանում մրցակցել կինոարտադրության հսկաներ «Սոնիի», «Դիսնեյի» եւ «Վիակոմի» հետ: Ջրfորյանին խորհուրդ էին տալիս ֆիրման ճգնաժամից դուրս բերելու համար հրավիրել հոլիվուդյան հայտնի պրոդյուսերների: Բայց հրավիրված Ֆրանկ Մանկուզոն եւ Ալան Լադը չկարողացան ոչինչ անել: 1999 թ. ապրիլին Ջըրfորյանը MGM-ի ղեկավար կարգեց իր հին զինակցին՝ ֆինանսիստ Ալեխ Եմենիջյանին:

Առաջին իսկ օրը 20 ժամվա լարված աշխատանքից հետո Եմենիջյանը պայմանագիր ստորագրեց «Յունիվերսալ փիչչրս» կինոստուդիայի հետ «Հաննիբալ» ֆիլմի համատեղ պրոդյուսերության շուրջը: Ցուցադրման միայն առաջին 3 օրերը բերեցին 58 մլն դոլար:

Ամերիկյան «Ֆորբս» հանդեսի տվյալներով, Ալեխ Եմենիջյանը Ջըրfորյանի հետ աշխատում է 1989 թվականից եւ փաստորեն նրա ֆինանսական խորհրդատուն է: Բավական երկար ժամանակ զբաղվել է Ջըրfորյանի «Էմ Ջի Էմ Գրանդ» հյուրանոցների եւ խաղատների ցանցով: Ալեխը ծնվել է Արգենտինայում, նախկին հայատանցիների ընտանիքում: 13 տարեկան էր, երբ ընտանիքը տեղափոխվեց Լոս Անջելես: Քոլեջն ավարտելուց 4 տարի անց՝ 1981 թ. հիմնեց հաշվապահական ֆիրմա, երեկոյան սովորելով Հարավային Կալիֆորնիայի համալսարանում եւ ստանալով կառավարման մագիստրի աստիճան:

Ջըրfորյանի գրասենյակում որպես հաշվապահ աշխատելուց հետո 1995 թ. Եմենիջյանը երկրորդ գլխավոր պաշտոնն զբաղեցրեց «Էմ Ջի Էմ Գրանդ» խաղատներում: «Ֆորբս» հանդեսը նրան անվանում է «Էմ Ջի Էմի կախարդ»: Եմենիջյանի ջանքերի շնորհիվ 2001 թ. առաջին եռամսյակում Լաս Վեգասի «MGM Grand» խաղատների եւ հյուրանոցների օդերեւութային եկամուտն ավելացավ 9 տոկոսով: MGM-ի մեկ բաժնետոմսի գինը երկու տարում 12-ից հասավ 19 դոլարի: Այսօր «MGM Mirage» անունով հայտնի խաղատների շուկայական գինը վերջին 4 տարում քառապատկվել է:

Եմենիջյանն ուզում է MGM կինոընկերությունը դարձնել լրատվական հոլդինգ: Թեեւ այսօր MGM-ը դրամաշրջանառության ծավալով զիջում է «Դիսնեյին» եւ «Վիակոմին», բայց ունի փառավոր պատմություն (հիմնվել է 1924 թ.), այնտեղ է նկարահանվել հանրահայտ «Քամուց քշվածները» ֆիլմը, թեեւ դրա ցուցադրման իրավունքը ժամանակին Ջըրfորյանը վաճառել է միլիարդատեր Թեդ Թերներին:

Ծրագիր կա MGM-ը դարձնելու համաշխարհային ձեռնարկություն՝ վերազգային, մալուխային եւ արբանյակային ալիքներով: Այսօր MGM-ը նկարահանում է ավելի շատ ֆիլմեր եւ ներգրավում լավագույն դերասան-դերասանուհիներին: 1,2 մլրդ դոլար տարեկան եկամտի կեսն ստացվում է նոր ֆիլմերից, 40 տոկոսը՝ գրադարանի արտոնագրումից, 7 տոկոսը՝ հեռուստատեսային ցուցադրումներից, 3 տոկոսը՝ այլ աղբյուրներից: Եմենիջյանը մտադիր է առաջիկա 4-5 տարում բազմապատկել եկամուտները, առավել կարեւորելով գովազդից, մալուխային եւ արբանյակային հեռուստատեսությունից եւ գրադարանից ստացվող գումարները:



Սանտա Մոնիկայում գտնվող MGM-ի կենտրոնակայանում Ալեխ Եմենիջյանի աշխատասենյակն անթերի է. սպիտակ կահույք, սպիտակ գորգ, կնոջ եւ երկու զավակների սեւ-սպիտակ լուսանկարներ: Եմենիջյանը, բարձրահասակ է, սլացիկ, նրա վերնաշապիկները կրում են իր իսկ պատրաստած ժաներիզավոր սպիտակ օձիքներ, որոնց թիվը վեց տասնյակ է: Տարիներ շարունակ հարկային պլանավորման աշխատանքներ կատարած պետական լիազոր հաշվապահն այսօր խոշորագույն կինոստուդիաների հետ քննարկում է հանրահայտ կինոստուդիաների հետագա զարգացման եւ հանգուցալուծման հարցերը:

Ըստ «Արմենիա ի միր» ամսագրի

ԼՈՒԿԻՐՔ

Այսօր մաթեմատիկան նաեւ հումանիտար մասնագիտությունների անբաժանելի մաս է

Նոր դասընթաց պետհամալսարանում

Սեպտեմբերի 1-ից Երեւանի պետական համալսարանի (ԵՊՀ) հումանիտար ֆակուլտետների առաջին կուրսեցիները կանցնեն նոր առարկա՝ մաթեմատիկայի հիմունքներ: ԵՊՀ ռեկտորական գծով պրոռեկտոր Արամ Սիմոնյանի գնահատմամբ՝ այսօր մենք ապրում ենք մի ժամանակաշրջանում, երբ զուտ բնագիտական եւ զուտ հումանիտար գիտությունների դարը կարծես թե անցել է: «Մի գիտություն, որ նախկինում բնագիտական էր, այսօր կարող է ե՛ւ բնագիտական համարվել, ե՛ւ հումանիտար, օրինակ՝ սոցիալական աշխարհագրությունը հումանիտար գիտություն է, ֆիզիկական աշխարհագրությունը՝ բնագիտական: Այդպիսի օրինակները շատ են՝ սոցիոլոգիա, քաղաքագիտություն, լեզվաբանություն: Բոլոր գիտությունները մաթեմատիկական մեթոդների, մոդելավորման կիրառման կարիք ունեն», ասաց Արամ Սիմոնյանը: Պրոռեկտորը համոզված է, որ մաթեմատիկական մոդելավորմանը, վիճակագրությանը, մաթ. մեթոդներին տիրապետելն ու կիրառելը ավելի ամբողջական են դարձնում հումանիտար թեւի ներկայացուցիչների գիտական հետազոտությունները:

Դասախոս կադրերի խնդիրը լուծելու է համալսարանի մաթեմատիկայի ֆակուլտետը: Ֆակուլտետի դեկան Գեղամ Գրիգորյանն ասաց, որ այսօր համալսարանի գիտխորհրդի նիստում կքննարկվի ծրագիրը, մինչեւ սեպտեմբեր կհրատարակվի բրոշուրան, իսկ դասագիրքը պատրաստ կլինի մոտ երկու տարուց:

Մագիստրատուրայում նույնպես նմանատիպ առարկա կմտցվի եւ կկոչվի մաթեմատիկական մեթոդների կիրառումը մասնագիտական հետազոտությունների մեջ:

Ռ. Մ.

Քիչ էր մնում հայ եվրոպատգամավոր ունենայինք

Եվրոմիության 25 երկրներում հունիսին անցկացված խորհրդարանական ընտրություններն աչքի ընկան ընտրողների պասսիվությամբ: Այդ մասին **«Ազգը»** ժամանակին տեղեկացրել է ընթերցողներին: Հավելման կարգով Փարիզի «Աշխարհ» թերթը տեղեկացնում է, որ պասսիվ են եղել նաեւ ֆրանսահայ ընտրողները: Այլապես կարող էինք այսօր հայ պատգամավոր ունենալ Եվրոխորհրդարանում:

Խոսքը ՌԱԿ Ֆրանսիայի երջանային վարչության հայտնի գործիչ Ալեքսի Գյովջյանի մասին է, որ «Ռոն-Ալպ-Կոտ դ'Ազյուր-Կոտ» ընտրատարածքում 3-րդ տեղն էր զբաղեցնում Ֆրանսիայի ժողովրդավարական միության ընտրացուցակում: Ցուցակի առաջին երկու անձինք դարձան եվրոպատգամավորներ, եւ շատ քիչ էվենտներ պակասեցին, որ Գյովջյանը եւս պատգամավոր ընտրվի:

Որոշ կարետոր գործերի առթիվ նա մասնակցում է կուսակցական խմբակցության դիրքորոշման մշակմանը: Եթե ընտրացուցակի առաջին կամ երկրորդ անձն իր պատգամավորության ընթացքում ուրիշ պաշտոն ստանա, ապա հնարավոր է, որ պարոն Գյովջյանը սիյանը փոխարինի նրան: Համենայն դեպս, ժամանակն է, որ Եվրամիությունում հայերը լրջորեն զբաղվեն քաղաքականությամբ, եւ այն էլ՝ տարբեր կազմավորումների շարքերում: Վաղուց ժամանակն է, որ Ֆրանսահայերի երրորդ սերունդը եւս ներգրավվի մեծ քաղաքականության մեջ, իր նպաստը բերելով թե համաեվրոպական եւ թե համազգային խնդիրների լուծմանը:

Պ. Ք.

Ռումինահայության երիտասարդ հոգեւոր հովիվը

Ապրիլից սկսած Բուխարեստի Սուրբ Առաքելոց՝ Ռումինիայի տարածքում ամենաընդարձակ հայկական եկեղեցում է ծառայում հայր Խորեն (Արտավազդ) Զաքարյանը, որը ծնվել է Գյումրիում 1977 թ.: Երկրաբարժից հետո տեղափոխվել է Էջմիածին, որտեղ, ըստ «Արմինյն միրոր սփեթեյթր» շաբաթաթերթի, սովորել եւ գերազանցությամբ է ավարտել Գետոգյան աստվածաբանական ճեմարանը:

Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի օրհնություններով եւ քաջալերությամբ ընդունվել է Երեւանի պետական կոնսերվատորիան, որտեղ այժմ 4-րդ կուրսի ուսանող է: 2003 թ. փետրվարի 27-ին ձեռնադրվել է քահանա Դարաբաղի առաջնորդ Պարգեւ արք. Մարտիրոսյանի ձեռամբ: Նախքան Բուխարեստ մեկնելը ծառայել է Էջմիածնի Սուրբ Գայանե վանքում, դասավանդել է Վազգենյան ճեմարանում:

Հ. Օ.

Հաջողակ բիզնեսը շարունակում է խուսափել շահութահարկ վճարելուց

Սկիզբը էջ 1

Վերոնշյալով, թերեւս, փոփոխությունները ավարտվում են: Վնաս հայտարարագրված գումարը դարձյալ հսկայական է՝ 185 մլրդ դրամ: 2002 թ.-ին կազմել էր մոտ 200 մլրդ դրամ: Դարձյալ այդ պարտքերի գերակշիռ մասը մի քանի խոշոր պարտքերի «գործունեության» արդյունք է: Առաջին 7 ընկերությունների հավաքական վնասը կազմել է շուրջ 105 մլրդ դրամ, իսկ առաջին 25-ինը միասին վերցրած 160 մլրդ դրամ: Այսինքն 185 մլրդ դրամի ընդհանուր վնասից 160 մլրդ դրամը միայն վերոնշյալ ձեռնարկություններինն է: Ամենամեծ վնասն արձանագրել են էներգետիկ ոլորտի եւ ջրամատակարար ձեռնարկությունները: ՀԱԷԿ-ի վնասը ավելի քան 30 մլրդ դրամ է, «Հայէներգոյինը»՝ 10 մլրդ, «Հրազդանի ՋԷԿ»-ինը՝ մոտ 6 մլրդ դրամ: «Երեւանի Ջրմուղ-կոյուղու» պարտքը 17 մլրդ դրամ է, «Հայջրմուղկոյուղունը»՝ 1,6 մլրդ դրամ: Հիշեցնեմ, որ այս ձեռնարկությունների մեծ մասը հանձնվել է մասնավորի կառավարմանը: Այդուհանդերձ, նրանց հարկային վնասը ոչ միայն չի նվազել, այլեւ ավելացել է:

Իբր թե առանց շահույթի աշխատողների թվում շարունակում են հանգրվանել «Ոսկին», Երեւանի ոսկերչական գործարանն ու Արարատի ոսկու արդյունահանման ձեռնարկությունը, Երեւանի ալրաղացը, Երեւանի համակցված կերերի գործարանը, Սեւանի հացամթերքների միավորումը, «Արմ-իտալը», Աբովյանի թթխմորի, հացի, Ալավերդու հացի գործարանները, «Մերսեդեսներ» ներմուծող «Ինտերմոտոր Արմենիան»: «Ջերմուկ» հանքային ջրի ամենախոշոր արտադրող եւ արտահանող «Ջերմուկ գրուպը» ոչ մի կերպ «չի կարողանում» շահույթով աշխատել: Օտարերկրյա կապիտալի ստեղծած ադամանդի մշակման եւ արտահանման «Դայմոնթեքը» եւ «Շողակը» հաջողությամբ շարունակում են «վնասաբեր» գործունեությունը: «Կոտայք» գարեջրի գործարանը, «Սարդարապատ» հյութերի արտադրության ընկերությունը, Ջրառատի եւ Բարձրաբերդի թռչնաբուծական ֆաբրիկաները, «Գրանդ Սանն» ու «Մասիս տաբակը», «Արմենիկումը» նույնպես գտնվում են այս ցանկում: «Հովնանյան ինտերնեյշնլը» եւ «Հանցման բիլդինգ փրոդաքթը» շինարարության ոլորտում շահույթ, ըստ նրանց հաշվետվությունների, չունեն: Ոչ միայն «Հայկական ավիաուղիները», այլեւ նրա չվերթերն իրականացնող «Արմավիան», չնայած այս շուկայում ունեցած եթե ոչ մենաշնորհ, ապա բավականին արտոնյալ կարգավիճակի, արդեն հասցրել են վնասներ կուտակել: «Ռոյալ-Արմենիա» հյուրանոցային սուրճի փաթեթավորման եւ արտադրության համատեղ ձեռնարկությունը մեր սրճասեր երկրում, որտեղ էլ վաճառում է այս ըմպելիքը, դարձյալ շահույթ չի ստանում: Վնասով են աշխատում անգամ մեր տնտեսության ամենակայացած ճյուղի՝ բանկային ոլորտի որոշ ներկայացուցիչներ: Դրանց թվում ոչ միայն վաղուց արդեն սնանկացած «Միավորված բանկը», «Կրեդիտ-Սերվիս», «Կրեդիտ Երեւան» եւ մի շարք այլ բանկեր են, այլեւ կարծես թե հաջողությամբ գործող «Առեֆսիմբանկն» ու «Զարգացման հայկական բանկը»: Նշենք նաեւ, որ հարկային վնաս ցույց տվածների թվում են գրեթե բոլոր ոլորտների՝ արտադրական, առողջապահական, զբոսաշրջային, սոցիալական, գիտական եւ կրթական, մարզական, լրատվական կազմակերպությունները: Թվարկումները չշարունակենք, քանզի պատկերը կարծես թե պարզ է:

Բոլորի համար էլ հասկանալի է, որ հարկային վնաս հայտարարագրողների մեծամասնության նպատակը շահութահարկ վճարելուց խուսափելն է: Իհարկե կան ընկերություններ, որոնք վերջին մեկ-երկու տարիներին խոշոր ներդրումներ են կատարել եւ չեն կարող միանգամից շահութաբեր գործունեություն ծավալել: Սակայն դա չի նշանակում, որ այդ ներդրումների վերադարձման ժամկետը կարելի է զանազան ծախսեր հավելագրելով անընդհատ հետաձգել եւ շահութահարկ չվճարել: Անցյալ եւ դրան նախորդող տարիներին այս խնդրին անդրադառնալով, նշեցինք, որ այստեղ օրենսդրության փոփոխության եւ հարկային վարչարարության խստացման խնդիր գոյություն ունի: Հակառակ դեպքում, երբ 200 մլրդ դրամ հարկային վնաս է ցույց տրվում, անհասկանալի է դառնում, թե ընդհանրապես ինչի՞ համար են հարկային ծառայության մի քանի հազար աշխատակիցներն աշխատում եւ աշխատավարձ (վերջին մեկ տարում էապես բարձրացված) ստանում: Սակայն սառույցն այստեղ շարժվեց միայն այս տարի:

Ապրիլի 1-ից «Շահութահարկի մասին» օրենքում կատարված փոփոխության համաձայն, ընկերությունները պարտավոր են իրենց շրջանառության 1 տոկոսը կազմող գումարը կանխավճարի տեսքով վճարել որպես շահութահարկ: Իհարկե, դեռ վաղ է ասել, թե գործնական ինչ նշանակություն կունենա օրենքի փոփոխությունը, բայց գլխավորն այն է, որ իշխանությունները վերջապես սկսել են այս խնդիրը կարգավորելու ցանկություն դրսեւորել, ինչի բացակայությունը մինչեւ վերջերս ստեղծված կացության ոտղակի հետեւանքն էր:

ԻՐԱՎԻՃԱԿ

Ընդդիմությունը իշխանության մահախոսականն է գրում, իշխանությունը՝ ընդդիմության: Բայց դեռ երկուսն էլ կան, թեեւ ծանր հիվանդի կարգավիճակում: Թե ով ում հուղարկավորը կդառնա վերջնահաշվում, դժվար է ասել:

Գարունը դիմավորենք առանց Քոչարյանի, ասում էր ընդդիմությունը, ինչը չիրականացավ, քանզի հայտարարությունը իրատեսական չէր: Տարին կեզրափակենք եւս մի հոծ արտագաղթով, ասում է հասարակությունը, եւ դա կլինի իրողություն, քանզի հասարակության այս ընդումը իրատեսական է: Արդյունքում ներկա պահին ընդդիմությունը նման է ֆուտբոլային այն թիմին, որի խաղացողը գնդակը դաշտի կենտրոնից արդեն քանի անգամ հետ է ուղարկում սեփական դարպասապահին՝ մոռանալով, որ գոլ խփելու միակ ելքը առաջ շարժվելն է: Նման դեպքում անխուսափելի է հանդիսատեսի սուլոցը: Իսկ մենք, որ հանդիսատես լինելուց առաջ նաեւ խաղի ակամա մասնակիցներ ենք, չգիտենք ինչ անել, սուլե՞լ, թե՞ զարմանալ...

Ամենայն հավանականությամբ շոգ ամառը կուղեկցվի քաղաքական սառնությամբ: Թեեւ հասկանալի է՝ անգործություն չի լինի: Ընդդիմությունը իր, իշխանությունը իր զով անկյուններում կսցենարավորեն քաղաքական մի աւուն, երբ սրանցից առաջինը կզբաղվի իր ուժերի վերադասավորությամբ, տակտիկական նոր քայլերի մշակմամբ, կդառնա վերիմաստավորված մի կառույց ու կնետվի գրոհի կամ էլ մնալով նույն վիճակում վերջնականապես կունենա իր մայրամուտը: Իսկ երկրորդը, որ իշխանությունն է, պիտի դիմագրավման նոր ձեւեր մշակի ընդդիմության կողմից «Բաստիլի» հնարավոր գրոհը դիմակայելու համար: Ամռանը գաղափարական եւ կազմակերպչական գործունեությունը չի դադարեցնի նաեւ «Նոր ժամանակները»: Մի կուսակցություն, որ թափ է հավաքում իր շարքերում իր ասելով արդեն ունենալով 12.000-ից ավելի անդամներ՝ հավակնելով երկու դիմոզավրերի բախումից հետո, նրանց հոգնած եւ ուժասպառ լինելու դեպքում նետվել ասպարեզ:

Իսկ իշխանությունն առայժմ հստակ հասկանալ է տալիս, որ հեղափոխություն անել հանդգնողները կպատժվեն, ընդհուպ ձերբակալությամբ: Մերժելի մի վարք՝ հեղաշրջումը սահմանադրության շրջանակներում իրագործելու դիմաց: Ընդդիմության ֆավորիտներն իրենց հերթին ընկրկում են փետրվարիին հայտնվելու վախից: Մինչդեռ չի լինում այնպես, որ ոչ անթերի եւ պասսիվ առաջնորդների հանդեպ հասարակությունը հասնի ոգեւորվածության այնպիսի աստիճանի, որ հայտնի հարթակում կանգնած հայտնի խմբին «վիվաս» գոչելով ուղեկցի նախագահական պալատ: Ո՞ր վաստակի դիմաց, ի՞նչ աղագայի տեսլականով: Մի կողմից կա իշխանափոխության հասարակական պահանջ, մյուս կողմից չկա դա իրականացնողը, առայժմ: Ու սա հրաշալի են հասկացել կոալիցիան, Քոչարյանն անձամբ: Հիմա ի՞նչ անենք: Ստեղծված իրավիճակում իբրեւ իշխանափոխիչ կարող է դառնալ երկու գործոն: Մեկը Ղարաբաղի հարցի «ողբերգական» ավարտն է, մյուսը՝ մեծ պետություններից որեւէ մեկի ցանկությունը:

Եթե կուզեք, Հայաստանում միշտ է քաղաքական իրավիճակը եղել այսպիսին: Միշտ է հասարակությունը անվստահություն հայտնել իշխանությանը եւ հիասթափվել ընդդիմությունից: Ու չի եղել մեզանում մի իրավիճակ, երբ ժողովուրդը միանշանակ համակրեր երկուսից գոնե մեկին: Ինչո՞ւ է այսպես ստացվել, երբ ոչ իշխանությունն է մեր ուրսով, ոչ ընդդիմությունը: Արդյոք սրանց մեջ տաղանդի, պետական մտածողության կամ նվիրվածության պակա՞ս կա: Տաղանդի բացակայությունը, ըստ իս, բացառվում է: Իսկ պետական մտածելակերպի եւ երկրին նվիրվածության պակասն ակնհայտ է: Շահախնդրությունը մեզանում այն հիդրան է, որին կուլ են գնում թե՛ քաղաքական գործիչները, եւ թե՛ քաղաքականությունը: Մահացու հիվանդություն է սա ուզածդ երկրի համար: Ասել, թե ընդդիմությունը զերծ է այս արատից, ճիշտ չի լինի: Տեսեք, երբ դեռ անցյալ գարնանը պետք է միավորվեր ընդդիմությունը, հասարակության պոռթկումի պահին, ընդդիմության երկու թեւերը Պանիկովսկի-Բալագանով զույգի նմանությամբ զբաղված էին ով ով է հարցի պարզաբանմամբ (ախր դու ո՞վ ես է, ասում էր մեկը, բա դո՞ւ ով ես, պնդում էր մյուսը): Քոչարյանը ճկունություն ցուցաբերելով այդ ընթացքում վերադասավորեց ուժերը եւ հայտնվեց իր համար շահեկան վիճակում: Եվ հայտնի ընդդիմադիրներից ոչ մեկը հաջողության չհասավ, ընկավ նրանց քաղաքական վարկանիշը: Առկա իրավիճակում հանրության վերաբերմունքն իշխանության եւ ընդդիմության նկատմամբ բացասական իմաստով համարժեք է ու բնական: Մեկ այլ վերաբերմունք կդիտվեր անհասկանալի: Փաստորեն ոչ մեկը, ոչ մյուսը ժողովրդից չունի վստահության բավարար քվե: Հասարակությունը մերժված է գործող վարչախմբից եւ գիտի, որ վաղն էլ կմերժվի իշխանության եկող ընդդիմությունից: Սա է խնդիրը եւ ի վարձ սրա, նույն հասարակությունը ինքն էլ իր հերթին է մերժում բոլոր նրանց, ովքեր ձգտում են օգտագործել իրեն հերթական անգամ: Ահա՛ պատճառը պատճառների, թե ինչու են հանրահավաքները դառնում սակավամարդ:

Ընդդիմությունը. Անհասկանալի է վերջինիս գործելաոճը կամ որ ճիշտն է՝ անգործությունը. ես սա ասում եմ ցավ ի սիրտ: Համաժողովրդական նման հուզումների եւ պահանջի պայմաններում ձախողել շարժումը պարզապես դատապարտելի է: Զգացվում է գաղափարների, գործողությունների պակաս: Կրիտիկական զանգված հավաքել միայն նրա համար, որ մեկի հեռացմամբ առաջ մղվի մեկ ուրիշը, պարզապես անիմաստ է: Նպատակն այն է ընդամենը, թե հարկավոր է ոչ յուրայիններին փոխարինել յուրայիններով եւ ամեն ինչ լավ կլինի: Այսպես է հասկացել հասարակության զգալի մասը իշխանափոխության նպատակը եւ դրա մեղավորը ընդդիմությունն է, ով չկարողացավ պարզաբանել համակարգայի՛ն փոփոխության գերխնդիրը: «Մենք լավն ենք, սրանք վատն են» կարգախոսը պարզունակ է: Որ սրանք վատն են, շատերն են համոզված դրանում, իսկ մենք լավն ենք ինքագովազդն էլ միանշանակ չէ եւս շատերի համար: Ոմանք կարծում էին, թե բավական է հայտարարվի հանրահավաքի օրն ու ժամը, եւ հեղաշրջումը պատրաստ է:

Ես զարմանում եմ, որ իշխանությունը փակում էր ճանապարհներ, ձերբակալում մարդկանց, գոտեւորում փշալարերով, որ ի՞նչ, ինչի՞ համար... Իսկ անցած հանրահավաքներն ավելի շատ նման էին բացօթյա սեմինարների ընդամենը, երբ անընդհատ լսում էիր, թե Հայաստանում խախտված է սահմանադրական կարգը: Իսկ ո՞վ պետք է վերականգներ դա, ո՞վ պետք է հաստատեր երկրում կարգ ու կանոն: Սաակաշվիլին գիտեր ինչ է ուզում եւ ինչ պետք է աներ: Նա առաջինն էր շարքում՝ առաջինը հարվածն ընդունելով իր վրա: Մեզ մոտ ընդամենը առաջինն են բարձրանում հարթակ՝ տեսնելու համար զանգվածի չափը: Ճիշտ է, Սորոսն օգնեց վրաց ընդդիմադիրներին, բայց դա չէր վճռորոշը, վճռորոշը վերջիններիս վճռակամությունն էր եւ ուղղամիտ միասնականությունը: Բուրջանաձեն եւ Ժվանիան չէին վիճարկում իրենց կարգավիճակը: Մեզ մոտ հերիք չէ լիդերները հանդես էին գալիս իբրեւ լեյտենանտ Շմիդտի որդիներ, յուրաքանչյուրն իրեն դիտում էր նախագահի իրավահաջորդ:

Ախ, այդ ամբիցիան որքա՜ն է վնասում ընդդիմությանը: Նույնիսկ հիմա, երբ ավարտվել է վերջիններիս պայքարի առաջին փուլը, դարձյալ տառապում են ո՞վ է առաջինը մտասեւեռմամբ: Դրա վառ ապացույցն էր «Հայկական ժամանակ» օրաթերթի ձեռնարկած նախագահական միջանկյալ ընտրություններ «շոուն», որ ավելի շատ մանկական խաղ էր հիշեցնում, եւ որի շրջանակներում ոմանք ձգտում էին ձեռք բերել առաջինի դափնին:

Իշխանությունը. Եթե ընդդիմությունը ուժերի վերադասավորման, հանրությանը նոր գաղափարներով ներկայանալու, նոր գործելաոճ որդեգրելու խնդիր ունի, ապա իշխանությունն ունի ինքնամաքրման, հայացքով դեպի ժողովուրդը դառնալու խնդիր: Այս առումով շատ ավելի դժվար ու անհավանական է իշխանության գործը: Հասարակությունը միամիտ չէ, որ հավատա նման հրաշքին: Քանզի անգամ Քոչարյանն՝ ուզենա էլ, չի կարող գործել Սաակաշվիլու ոճով, որը ձերբակալում է օլիգարխին, ազատվում ապազգային տարրերից, խորանում ժողովրդավարության մեջ: Քոչարյանը նույնն անել չի կարող, քանի որ իր դեմ կհանի ամբողջ ստվերը, դրան գումարած ԱԺ-ն, կառավարությունը: Չի կարող, քանզի կասեն. «Բարեկամս, այդ մենք ենք քեզ կարգել նախագահ, մենք էլ կհանենք, էս ի՞նչ ես անում»: Մյուս կողմից, այս ԱԺ-ի եւ կառավարության լուծարումը պարզապես անհրաժեշտություն է: Բոլորս լավ ենք հիշում Անդրանիկ Մարգարյանի եւ Արթուր Բաղդասարյանի սպառնալիքներն իրենց կառույցների հնարավոր լուծարման հետ կապված: Այս իրավիճակում Քոչարյանն ինչպե՞ս փոխի երկրի վտանգված ընթացքը: Ասում են՝ նրան հնարավորություն է տրված ընդառաջելու ժողովրդին, բայց չէ որ դա կնշանակի տարանջատվել իր միջավայրից: Չի կարող, քանի որ սա զուտ ինքնամաքրման խնդիր չէ, այլեւ ստեղծված բարդ իրավիճակից դուրս գալու պահանջ: Բոլորը կարծում են, թե կոալիցիան պատրաստանում է նախագահին: Այդպես չէ, կոալիցիան պատրաստանում է ինքն իրեն. չլինի Քոչարյանը, չեն լինի իրենք: Ահա կլանային դրսեւորման փայլուն օրինակ: Պետք է հասկանալ նաեւ, որ կոալիցիան նախագահի, նախագահը կոալիցիայի վրա ունեն այնքան եւ այնպիսի կոմպրոմատներ, որ անհրաժեշտ պահին կարող են իրար ոչնչացնել: Բայց հիմա դեռ իրար պետք են, նման բան չեն անի:

Ընդդիմությունը իշխանությանն է ասում՝ այս ովքե՞ր են դատավորները, իշխանությունը՝ ընդդիմությանը: Մինչդեռ մեծ լոռեցու լեզվով ասած՝ շան ու կատվի այս կռիվը թանկ է նստում մեզ վրա, քանզի եթե ընդդիմությունը ժողովրդի տված մորթու դիմաց գդակն է ուզում, իշխանությունը պնդում է՝ դեռ շուտ է, անցումային երկրներում այսպես արագ ժողովրդավարություն հաստատել հնարավոր չէ: Իշխանության կողմից ակնհայտ է հետեւյալ գործելաոճը: Վերջինս մի ձեռքում պահած ունի ժողովրդավարության կերոնը, մյուսում՝ նույն այդ ժողովրդավարության ձեռնաշղթան: Ստացվում է թատրոն: Կոալիցիան այս թատրոնի ոչ միակ հանդիսատեսը լինելով, միակն է ծափահարողներից: Իսկ ի՞նչ է եղածը. իշխանությունը ձգտում է պահել իր ստատուս քվոն, ընդդիմությունն՝ իր: Երկուսն էլ նույնն անում են վաղուցից: Ընդդիմության բարեկիրթ կեցվածքին վարչախումբը պատասխանում է ուժով՝ սահմանադրությունը ճզմելով կրունկի տակ: Ու մինչ ընդդիմությունը կկողմնորոշվեր, ձկների վտառը եկավ ու անցավ ուրկանի կողքով: Այսօր թող խռովահույզ ընդդիմադիրներն իրենց մեջ որոնեն հարցի պատասխանը, թե այդ ո՞նց անցած գարնան 100 հազարանոց հանրահավաքները մարելով հասան 10-5 հազարի...

Ասում են՝ ավելի լավ է վառել մթության մեջ մի մոմ, քան դժգոհել խավարից: Ճիշտ է, բայց ինչպես անենք այն դեպքում, երբ ընդդիմության վառած մոմը հանգցնում է իշխանությունը, իշխանության վառած մոմն էլ մարում է ընդդիմությունը:

Եթե այսօր ընդունենք, որ ընդդիմության թիվ 1 սխալը նրա թուլությունն ու ավելորդ ինքնավստահությունն են, ապա իշխանության թիվ 1 սխալն ընդգրկում է ավելի մեծ տեսակների՝ համառություն, ինքնասածություն, ժողովրդից կտրվածություն եւ այլն: Ու եթե ավելացնենք ավտորիտարիզմի առավել վաս դրսեւորումը՝ ես այս եմ, որ կամ, այսպես եմ գործելու, սա՛ է իմ ասածը, ուզում եք ուզեք, չէ՛, չէ՛... ամեն ինչ պարզ կդառնա: Ստացվում է կրակն ենք ընկել իշխանության բնավորության ձեռքը: Ո՞վ պետք է հակազդի սրան, եթե ոչ ընդդիմությունը, ով չի կարողանում կամ էլ ում հաշվի չեն առնում: Գալով կոալիցիային, սա էլ Բուրբոններից հետո բոնապարտության շրջանի երեքի կոնսուլատը չէ եւ չունի ցանկալի ներազդման լծակ. սա անհրաժեշտ տրումփիրատը չէ՝ տիրոջը զսպելու համար:

Իսկ լուսաբացն ուշանում է. առջեւում ի՞նչ է սպասում մեզ. պրովինցիայի մայրամո՞ւտ, ինչպես կասեր հանճարեղ Չարենցը, թե՞ երկրի լուսաբաց: Համենայն դեպս, թե՛ Արտաշես Գեղամյանը, թե՛ Ստեփան Դեմիրճյանը, թե՛ իշխանությունը լուսաբաց են խոստանում: Բոլորը խոստանում են, իսկ լուսաբացն ուշանում է: Իսկ մինչ կգան նոր ժամանակները, մինչ կբացվի լուսաբացը, ժողովուրդը տնքում եւ հեռանում է: Չարագացնե՞նք լուսաբացը, քանզի դրանով են պայմանավորված հասարակության տվայտանքների ավարտն ու համաշխարհային հանրությանը մեր նախանկիզբ ուժեղ եւ իմաստուն կեցվածքով հասնելու հնարավորությունը:

ՏԻԳՐԱՆ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Առավոտյան փաքաքես, իրիկունը փաքաքես

Մերօրյա հայ պատասխանատվության թվերով կերակրելը հաճելի գործ է դարձել: Միայն հասկանալի չէ, թե ինչո՞ւ այդ աճող թվերի շարանը որեւէ ձեւով չի նպաստում հանրության հիմնական մասի փոքր-ինչ բարեկեցության բարելավմանը:

Այս յուրօրինակ գործելաոճը լավագույնս են յուրացրել մեր 3 միլիոնին կերակրելու կոչված պետական բարձրագույն մարմնում՝ ՀՀ գյուղնախարարությունում: Օրեր առաջ հանրությանը տեղեկացվեց մինչեւ 2015 թվականը «ՀՀ գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարություն» ծրագրի հաստատման մասին: Այս առումով թերեւս արժե հիշել ԽՍՀՄ տարիների «Ագրոպարենային համակարգի զարգացման մասին» ծրագիրը, որի ընդունմանը հաջորդեց տխրահռչակ կտրոնային գործընթացը: Ի՞նչ իմանաս. հայ իշխանավորները չե՞ն առաջնորդվում արդյոք «լավագույն նորը լավ մոռացված հինն է» սկզբունքով:

Փորձենք ծանոթանալ վերոհիշյալ ծրագրի ուղղություններից մեկին՝ անասնապահության ոչխարաբուծության ոլորտին: Ընթերցողը կհարցնի՝ իսկ ինչո՞ւ ոչ կաթնամսատուի կամ խոզաբուծության արտադրությանը, որը զարգացման հուսալի երաշխիք է ապահովում, սպառումն էլ առավել հաճելի է հայերիս համար: Որովհետեւ ոլորտի պատասխանատուները գտնում են, որ այստեղ... կերի խնդիր կա. ոչխարը, գիտեք, հեշտությամբ է հայթայթում իր կերաբաժինը: Չասեք՝ սուրօրինակ է, քանզի նախարարությունում նման մոտեցումն են ծրագրային համարում: Եվ խնդրեմ. 2002-ի համեմատ 2015 թվականին խոշոր եղջերավորի գլխաքանակը կաճի 45 տոկոսով (535 հազ.-785 հազ.), ոչխարինը՝ 150 տոկոսով (600 հազ.-1,5 մլն): Անհայտ է, թե ինչպես են գյուղացու գործերին միջամտել չփորձելը հիշատակող այրերն իրականացնելու այս խնդիրը: Փոխարենը գիտեն ոչխարի մսի արտադրության ստույգ թիվը՝ 32 հազար տոննա: Միջինը 30 կգ կենդանի քաշ ունեցող 1 մլն մաքր եղջերավոր է հարկավոր մորթել այս ցուցանիշն ապահովելու համար: Տեսնես նախագահական ընտրություններ կլինե՞ն այդ տարում:

Համանման թվերը միակը չեն այս առումով: Կերերի սահմանափակ հնարավորությունը փաստարկելով, ծրագրի հեղինակները մսի արտադրության հիմնական աճ չեն նախատեսում խոզաբուծությունում, որ 1 խոզամայրը 7-10 խոճկոր է ծնում: Բայց արի ու տես՝ կերային մշակաբույսերի ցանքատարածությունների աննախադեպ աճ նախատեսվում է 320 տոկոսով: Թե ինչ է ցանվելու ծրագրված 185 հազ. հեկտարի վրա, որը մեզ այդպես էլ չի ազատում չինական ու բրազիլական մսամթերքները ներմուծելու պարտադրանքից, մնում է անհայտ: Փոխարենը իրողություն է, որ այս ու զարգացման հասած շատ այլ երկրներում իրենց հիմնական մշակաբույսերին զուգահեռ զարգացնում են կերային եգիպտացորենի արտադրությունը: 2002-ին Չինաստանում այն կազմել է 123 մլն տոննա, Բրազիլիայում՝ 35 մլն տոննա:

«Մերն ուրիշ է» աշխատանքը լավագույնս է ցուցադրվում ծրագրի կարտոֆիլի արտադրության թվերում: Ներկայիս տարեկան 1 բնակչի հաշվով 120 կգ գերարտադրությունը առաջիկայում կհասցվի... 200 կիլոգրամի: Հայրենադարձը ժամանակին նման առիթով է ասել՝ առավոտյան փաքաքես, ճաշին փաքաքես, իրիկունը փաքաքես:

Գիտեմ ինչն է այս ամենում զավեշտալին. բարձրագույն իշխանությունը տեղյակ է, որ երկիրն այսօրինակ գործելաոճով չեն կառուցում, բայց սուրօրինակորեն դիտողի կեցվածքն է նախընտրում: Կարծես խոսքն իր կողմից տնօրինվող երկրին չի վերաբերում:

ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՅԱՆ

Փառատոնի Օրագիր



ՈՍԿԵ ԾԻՐԱՆ

GOLDEN APRICOT
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԻՆՈՓԱՌԱՏՈՆ
30 ՀՈՒՆԻՍ - 4 ՀՈՒԼԻՍ, ԵՐԵՎԱՆ 2004

ՄՐՑԱՆԱԿՆԵՐԸ

Խաղարկային լիամետրաժ ֆիլմերի անվանակարգ

«Ոսկե ծիրան» գլխավոր մրցանակ. «ԱՐԱՐԱՏ», ռեժիսոր՝ Ատոմ Էգոյան (Կանադա)
Ժյուրիի հատուկ մրցանակ. «ՏԵՂ ԵՐԿՐԻ ՎՐԱ», ռեժիսոր՝ Արթուր Արիստակիսյան (Ռուսաստան)

Կարճամետրաժ ֆիլմերի անվանակարգ

«Ոսկե ծիրան» գլխավոր մրցանակ. «ԻՄ ԱՆՈՒՆՆ Է...», ռեժիսոր՝ Ստեֆան Էլմաջյան (Ֆրանսիա)
Ժյուրիի հատուկ մրցանակ. «Y.U.L.», ռեժիսոր՝ Կոմս Շահբազյան (Բելգիա)

Փաստագրական ֆիլմերի անվանակարգ

«Ոսկե ծիրան» գլխավոր մրցանակ. «ՀԵՔԻԱԹ ԹԵՎԱՎՈՐ ՋԻՈՒ ՄԱՍԻՆ», ռեժիսոր՝ Արմեն Խաչատրյան (Հայաստան)
Ժյուրիի հատուկ մրցանակ. «ԻՆՏԻՄ ՔԱՂԱՔԸ», ռեժիսոր՝ Քրիստինա Դավիդյանց (Էստոնիա)
Ժյուրիի մրցանակ. «ԵՍ ՄԱՀԱՑԵԼ ԵՄ ՄԱՆՈՒԿ ԺԱՄԱՆԱԿ», ռեժիսոր՝ Գեորգի Փարաջանով (Ռուսաստան):

Անիմացիոն եւ փորձարարական ֆիլմերի անվանակարգ

«Ոսկե ծիրան» գլխավոր մրցանակ. «FREEDUB 1», ռեժիսոր՝ Ստեֆան Էլմաջյան (Ֆրանսիա)
Ժյուրիի հատուկ մրցանակ. «ԿՅԱՆՔԻ ԳԻԾԸ», ռեժիսոր՝ Սերժ Ավետիսյան (Ֆրանսիա)
Դիպլոմների են արժանացել. «ԽԱՂ», ռեժիսոր՝ Դավիթ Սահակյանց (Հայաստան), «ԵՐԵՔ ՊՈԵՏ ԵՎ ՉԱՐԵՆՑ», ռեժիսոր՝ Նաիրա Մուրադյան (Հայաստան)

Ուսանողական եւ դեբյուտային ֆիլմերի անվանակարգ

«Ոսկե ծիրան» գլխավոր մրցանակ. «ՀՐԱԺԵՇՏ» ռեժիսոր՝ Մարիա Սահակյան (Հայաստան-Ռուսաստան)
Ֆրունզե Դովլաթյանի անվան «Հույս» մրցանակ. «ՔԱՂԱՔ», ռեժիսոր՝ Վարդան Հակոբյան (Հայաստան)
Դիպլոմների են արժանացել «SOS I-III», ռեժիսոր՝ Արմեն Տեր-Մկրտչյան (Հայաստան), «ՉԻԺԻԿ», ռեժիսոր՝ Վարդան Հ. Հակոբյան (Ռուսաստան), «ԷԿԶԵՐՍԻՍ», ռեժիսոր՝ Դիանա Քարդումյան (Հայաստան)

Հայաստանի կինոգետների եւ կինոլրագրողների ասոցիացիայի մրցանակ

Լավագույն կինոնկարի համար. «ՍՈՒՐԲ ԾԵՍԵՐԻ ԵՐԿԻՐԸ», ռեժիսոր՝ Էդգար Բաղդասարյան (Հայաստան)

Վիդեոարվեստի անվանակարգ

«Ոսկե ծիրան» գլխավոր մրցանակ. «ԵՍ ՔՈ ԵՐԱԶՆԵՐԻՆ ՉԵՄ ՀԱՎԱՏՈՒՄ», ռեժիսոր՝ Դիանա Հակոբյան (Հայաստան)
Հատուկ մրցանակ. «ԱՆՎԵՐՆԱԳԻՐ», ռեժիսոր՝ Գայանե Եղիազարյան (1կադր-1տող, Հայաստան)

Թվեր եւ փաստեր

«Շոր եւ Շորշոր»

«Աշուղ Ղարիբ»

«Հռենոսի անցումը»

«Ոսկե ծիրան» փառատոն էին ժամանել աշխարհի 20 երկրներից շուրջ 70 մասնակիցներ եւ հյուրեր, այդ թվում՝ կինոռեժիսորներ, պրոդյուսերներ, կինոքննադատներ, դերասաններ:

Փառատոնի գրասենյակը սպասել էր մոտ 200 կինոնկար աշխարհի 20 երկրներից:

121 ֆիլմ էր ընտրվել փառատոնում ցուցադրվելու համար:

Վեց մրցութային անվանակարգերով ներկայացվեց 84 կինոնկար (7 լիամետրաժ խաղարկային, 7 կարճամետրաժ խաղարկային, 16 փաստագրական, 15 անիմացիոն եւ փորձարարական, 14 ուսանողական եւ դեբյուտային կինոնկարներ, ինչպես նաեւ վիդեոարվեստի 25 աշխատանքներ):

63 ֆիլմ ընդգրկվել է փառատոնի արտամրցութային ծրագրերում (28-ը՝ ինֆորմացիոն, 13-ը՝ միջազգային եւ 22-ը՝ ռետրոսպեկտիվ): Ֆիլմերի մեծ մասը Երեւանում ցուցադրվեցին առաջին անգամ:

Փառատոնի ինֆորմացիոն ծրագրում ընդգրկված էին վերջին տարիների ըվեդական, գերմանական եւ բուլղարական լավագույն կինոնկարներ, ինչպես նաեւ Ռոտերդամի փառատոնի մրցանակակիր ֆիլմեր: Գունար Բերգդալի ֆիլմ-եռերգությունը՝ նշանավոր ըվեդ կինոռեժիսոր Ինգմար Բերգմանի մասին, ընդգրկվել էր ըվեդական ծրագրում:

Ֆիլմերը ցուցադրվեցին «Մոսկվա» եւ «Նաիրի» կինոթատրոններում, Նորարարական փորձարարական արվեստի կենտրոնում (ՆՓԱԿ) եւ Ազգային պատկերասրահում:

Փառատոնը հատուկ միջոցառումների հագեցած ծրագիր ուներ:

Տոնվեց հայ կինոյի հիմնադրման 80-ամյակը, որի առթիվ Նկարիչների միությունում բացվեց հայ կինոնկարիչների աշխատանքների ցուցահանդես:

Կայացավ «Հայֆիլմի» թողարկած վերջին կինոժապավենի՝ Սուրեն Բաբայանի «Ժանո» ֆիլմի պրեմիերան:

Սերգեյ Փարաջանովի ծննդյան 80-ամյակը նշվեց նրա երեւանյան թանգարանի եւ Հայաստանի ազգային ֆիլմադարանի հետ համատեղ: Ներկա էին կինոռեժիսորի այրին՝ Սվետլանա Շչերբայուկը եւ որդին՝ Սուրեն Փարաջանովը, «Նռան գույնը» ֆիլմի գլխավոր դերակատար, վրաց նշանավոր դերասանուհի Սոֆիկո Ճիաուրելին: Ֆրանսիացի արվեստագետ Ռաֆայել Վիեռլինգը ֆիլմադարանում բացօթյա ինստալացիա ներկայացրեց՝ փարաջանովյան մոտիվներով:

Տեղի ունեցան Շառլ Ազնավուրի ծննդյան 80-ամյակին նվիրված երեկո եւ նրա մասնակցությամբ ստեղծված «Կրակեմ դաշնակահարի վրա», «Հռենոսի անցումը» ֆիլմերի հետահայաց ցուցադրությունը: Ներկա էր Հայաստանում Ֆրանսիայի դեսպանը:

Փառատոնի բացման օրը Սբ Զորավոր եկեղեցում առաջին անգամ կատարվեց Ծիրանի օրհնման արարողություն:

Մրցանակակիրները

Ատոմ Էգոյան (ծն. 1961, Կահիրե)
Մեծացել է Վիկտորիայում (Արևմտյան Կանադա): 1978-ին տեղափոխվել է Թորոնթո, որտեղ ուսանել է միջազգային հարաբերություններ և դասական կիթառ, անդամակցել է կինոակումբի և սկսել ֆիլմեր նկարահանել: Բեմադրել է օպերա («Սալոմե», 1996) եւ գրել սեփական օպերա («Անուրեթություն», 1998):

Ֆիլմոգրաֆիա
Բաց տուն (1981), Հարազատը (1984), Ընտանեկան դիտում (1987), Խոսուն դերեր (1989), Աղահովագրական գործակալը (1991), Օրացույց (1993), Էկզոտիկա (1994), Լուսավոր գալիք (1997), Ֆելիսիայի ուղևորությունը (1999), Քրափի վերջին երիզը (2000), Սփյուռք (2001):

Արթուր Արիստակիսյան (ծն. 1961 Քիշնեւ, Մոլդովա)
Ուսանել է Մոսկվայի կինոդպրոցում (ՎԳԻԿ): Նրա առաջին՝ «Ափեր» կինոնկարը միջազգային փառատոներում արժանացել է մրցանակների, ինչպես նաեւ «Նիկա» մրցանակի՝ որպես լավագույն վավերագրական ֆիլմ:

Ֆիլմոգրաֆիա
Ափեր (1993)

Ստեֆան Էլմաջյան (ծն. 1966, Փարիզ)
1985-ին մասնակցել է «Լարդուֆս ֆիլմս» անկախ արվեստանոցի ստեղծմանը: 1995-ին ընկերների հետ կազմակերպել է «Անշնորհների միություն» կինոգործիչների խումբը, որը նկարահանել է հինգ համատեղ կինոնկար:

Ֆիլմոգրաֆիա
Քամու գործոնը (1993), Նշումներ Լյումիերների մասին (1995), Շառլըլի Կուտյոր, գյուղերի երաժշտությունը (1997), Սեւ Մարիա, հաշիշ (1997), Պանամական տեսիլներ (1998), Գեղեցիկ վայրկյան. ճաշը (2000), Գովազդային հոլովակ. կարճ, բայց խոսան (2001), Քաղաքի փրփուրը. Բորդո (2001):

Կոմս Շահբազյան (ծն. 1972)
1998-ին Բրյուսելում ուսանել է միջազգային առեւտուր, 2001-ին՝ ավարտել Փարիզի ֆրանսիական կինոյի ազատ կոնսերվատորիան: 1995–1999 թթ. ԱՄՆ-ում եւ Բելգիայում մասնակցել է թատրոնի եւ կինոյի, կրկեսի եւ լուսանկարչության դասընթացների: 2002-ին սեփական սցենարներով նկարահանել է կարճամետրաժ ֆիլմեր, որոնք ցուցադրվել են մի շարք փառատոներում:

Ֆիլմոգրաֆիա
Անվերնագիր (2002), Շարունակելի (2002):

Էդգար Բաղդասարյան (ծն. 1964, Երեւան)
1985-ին ավարտել է Երեւանի անասնաբուժական ինստիտուտը: 1986-87-ին՝ ադմինիստրատոր Հայիամերգում, 1988-ից՝ ռեժիսորի ասիստենտ, այնուհետեւ՝ ռեժիսոր «Հայկ» եւ «Հայֆիլմ» ստուդիաներում:

Ֆիլմոգրաֆիա
Խաղեր (1990), Հոսք (1997)

Արմեն Խաչատրյանը (ծն. 1961, Երեւան)
1984-ին ավարտել է Մոսկվայի կինոինստիտուտը (ՎԳԻԿ): Աշխատում է «Հայֆիլմ» եւ «Հայկ» կինոստուդիաներում: Մասնակցել է 30-ից ավելի ֆիլմերի ստեղծմանը: Դասավանդում է Երեւանի թատրոնի եւ կինոյի ինստիտուտում, հեռուստատեսության եւ ռադիոյի ակադեմիայում:

Ֆիլմոգրաֆիա
Օպերատոր. Ճամփաբաժան (1987), Արցախի վարպետները (1988), Արքնացած զանգ (1989), Սպիտակ գիշեր կույր սուրհանդակի համար (1989), Մարգարեն Թեյչեր. միայն չորս ժամ (1990), Ֆրանց Վերֆել (1990), Ամոան սկիզբը (1991), Ընտրություն (1992), Ուղերձ ոդդա (1993), Ինչո՞ւ (1995):
Ռեժիսոր. Թափառում մենակության մեջ (1998), Սեվ լուսին (2001):

Քրիստինա Դավիդյանց (ծն. 1974, Բաքու)
Վավերագրող եւ կինոքննադատ, Էստոնիայի կինոլրագրողների միության անդամ: Աշխատակցում է «Էեստի Էքսպրես», «Պոստիմեես», «Սիրդ», «Նեդելյա», «Տեատր, մուզիկա, կինո» պարբերականներին:

Ֆիլմոգրաֆիա
Ողջույն, սիրելի տուն (2000), Հակամարմիններ (2000):



Գեորգի Փարաջանով (ծն. 1960)
Ավարտել է Մոսկվայի կինոինստիտուտը (ՎԳԻԿ): Աշխատում է անցել Ֆեդերիկո Ֆելլինիի մոտ՝ «Ջինջերը եւ Ֆրեդը» ֆիլմի նկարահանումների ժամանակ: Հեղինակ է «Զեդդ», «Թաղումների սեզոնը» եւ «Յա մայկա» ֆիլմերի: Վերջինս արժանացել է Գլխավոր մրցանակի Ռիմինիի (Իտալիա) փառատոնում, Լոկարնոյի (Շվեյցարիա) փառատոնում՝ ժյուրիի մրցանակին եւ Մոլիեր եղբայրների ոսկե մեդալին:

Սերժ Ավետիսյան (ծն. 1955, Երեւան)
1971-ից բնակվում է Ֆրանսիայում: Ուսանել է Մոդոնի դրամատիկական ավետսի կոնսերվատորիայում, ապա՝ աշխատել Փարիզի կոնսերվատորիայի ուսանողների հետ: Խաղացել է բազմաթիվ պիեսներում եւ կինոնկարներում: 1976-ից նկարահանում է վավերագրական ֆիլմեր: 1988-ին հիմնել է սեփական կինոընկերությունը:

Ֆիլմոգրաֆիա
Միտ պատմություն՝ Աղավնի եւ Ավետիս (1981), Առանց վերադարձի հնարավորության (1982–1983), Ինչ եղան իմ ընկերները (1984), Հայաստան 1900 (1989), Բարեւ, պարոն (1990), Իրականացված առաքելություն (1990), Հինգերորդ երազ (1994), Ցտեսություն, տիկին (1996), Տիկնայք եւ պարոնայք (1997), Lux Aeterna (1998), Terra Emota (1998), Երկու ցցափայտի միջեւ (2002):

Մարիա Սահակյան (ծն. 1980, Երեւան)
2003-ին ավարտել է Մոսկվայի կինոինստիտուտը (ՎԳԻԿ):

Վարդան Հակոբյան (ծն. 1978)
1999-2001-ին եղել է Երեւանի թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտի ազատ ունկնդիր: 1999-ից աշխատել է «Հայֆիլմ» կինոստուդիայում՝ որպես ռեժիսորի ասիստենտ, իսկ 2003-ից ռեժիսոր է:

Դիպլոմանտները

Դավիթ Սահակյանց (ծն. 1975, Երեւան)
1992-ից աշխատում է «Հայֆիլմ» կինոստուդիայում:

Ֆիլմոգրաֆիա
Hot, Hot Dog (2001), Այդ օրը (2002), Կանխագուշակում (2003), Նախ եւ առաջ (2003):

Նաիրա Մուրադյան
Սովորել է Փ. Թեղեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանում: «Հայֆիլմ» կինոստուդիայում սկսել է աշխատել 1979 -ից՝ որպես նկարիչ- բեմադրող մուլտիպլիկացիոն ֆիլմերում: Նկարազարդել է ավելի քան 10 մանկական գրքեր: Աշխատում է «Շողակաթ» հեռուստաընկերությունում:

Ֆիլմոգրաֆիա
Այդ ոչինչը ես եմ (1994):



Արմեն Տեր-Մկրտչյան (ծն. 1963)
1994-ին ավարտել է Սանկտ Պետերբուրգի մշակույթի ակադեմիայի կինոռեժիսուրայի բաժինը:

Ֆիլմոգրաֆիա
Ցկա մարդուց առավել (1989), Համբարձում (1994), Մեսամորֆոզ (2002):

Վարդան Հ. Հակոբյան (ծն. 1977)
1995-97-ին ուսանել է Խ.Աբովյանի անվ. մանկավարժական ինստիտուտի կույսուրայի ֆակուլտետի հեռուստառեժիսուրայի բաժնում, 1997-ից ուսուցումը շարունակել է Մոսկվայի կինոինստիտուտում (ՎԳԻԿ):

Ֆիլմոգրաֆիա
C est la Vie (1996), Ես քեզ սիրում եմ (1997), Դուդուկ (2001), Իմ անունը երջանկություն է (2004):

Դիանա Քարդումյան (ծն.1981)
Սովորում է Երեւանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի կինոռեժիսուրայի բաժնում:

Գլխավոր Արցանակ

ՈՍԿԵ ԾԻԲԱՆ

GOLDEN APRICOT

- Ինչու՞ «Արարատը» նկարահանեցիք ձեր կարիերայի հենց այս պահին:

- Երեք տարի առաջ Թորոնթոյի հայկական համայնքի կենտրոնում մի համեստ ընդունելություն էր կազմակերպվել իմ պատվին: Ներկա էր նաեւ կինոարտադրող Ռոբերտ Լանտոսը, որի հետ արդեն վաղուց եմ աշխատում, եւ իմ խնդրանքով նա մի փոքրիկ ելույթ ունեցավ: Լանտոսն ասաց, թե շատ ֆիլմեր է տեսել իր ժողովրդի տառապանքների մասին, բայց առայժմ ոչինչ՝ Հայոց ցեղասպանության վերաբերյալ: Հետո նա ավելացրեց, որ ինձ կաջակցի, եթե ցանկանամ նման ֆիլմ ստեղծել: Դա զարմանալի հրավեր էր եւ իսկական առիթ: Ինչ վերաբերում է ինձ, ես տարիներ շարունակ մտածել եմ դրա մասին: Առաջիկա աշխատանքն ու պատասխանատվությունը ինձ երկյոտ ներշնչեցին, բայց միեւնույն ժամանակ զգացի, որ պահը վրա է հասել: Ռոբերտ Լանտոսը թողարկել է «Արեալույսի համը»՝ մի պատմական կինոկտավ Հունգարիայի հրեաների մասին: Այս կարգի ֆիլմը հենց այն է, ինչի կարիքը մեզ՝ հայերս, ունենք, բայց ես գիտեի, որ դա ի-

Մասնակի կրճատումներով ներկայացնում ենք կանադահայ նշանավոր ռեժիսորի բացառիկ հարցազրույցը, որ տպագրել է Փարիզում հրատարակվող «Նուվել դ'Ամեն» հանդեսը:

ռագործելու ընդունակ մարդը ես չեմ: Երբ պատկերացրի, որ դեպքերը հնարավոր է ընդգրկել ֆիլմի մեջ նկարահանվող ֆիլմում, ցույց տալ կադրեր, որոնք կդիտվեն՝ առանց խոսակցությունների տեղիք տալու, այդ ժամանակ էլ հասկացա, որ պատրաստ եմ նկարահանումներին:

- Ինչպե՞ս է ֆիլմը հարաբերվում այդ միջանկյալ ֆիլմի հետ, որը պատմում է Ցեղասպանության մասին:

- Միջանկյալ ֆիլմը շատ կարեւոր է: Դա այն չէ, ինչ ես ուզում էի անել եւ միաժամանակ այն է, ինչ արել եմ: Կադրերն անկեղծ են, եւ ես ծուռ աչքով չեմ նայում նրանց, ովքեր սպասում են միայն այդ ֆիլմին: Բայց ես ցանկացել եմ խոսակցություն բացել պատմությունն արարելու մասին, որովհետեւ, իմ կարծիքով, հայի հոգեբանության մեջ այդ ամենը վերարտադրելու միտքը ճշմարտացի հարցական է դնում: Բավական չէ ինչ-որ բան ցուցադրել, հարկավոր է նաեւ ասել, թե ինչու է մեզ անհրաժեշտ դա ցուցադրել եւ այդ անելիս հավանության զգացում ունենալ:

- Իհարկե, ժխտման պատճառով...

-Այո, բայց եթե մենք հետամուտ ենք ուրիշների հավանությանը, դա մեզ դնում է խոցելի վիճակում: Մենք պետք է հասկանանք, որ պատմությունն այն է, ինչ հենց ինքներս ենք ստեղծում: Միտքս բացատրեմ. երբ Ցեղասպանության մասին պատմում ես երեխային, ինչպես ես եմ վարվել, վերջում միշտ հարցնում է. «Նրանք ներողություն են խնդրել»: Այսօր պատմությունը կատարված դեպքերը չեն, այլ այն փաստը, որ մեզնից ներում չեն հայցել: Ես գիտակցում եմ, որ հայերի կարծիքով, այդ ժամանակաշրջանի մասին պատմող ֆիլմը շատ բան կփոխի: Ես իրոք հավատում եմ, որ հուզումներ կառաջանան, բայց դրանք չեն լինի նրանց ակնկալածը:

- Այսինքն:

- Ֆիլմը մեծ ներգործություն կունենա համընդհանուր պատկերացումների վրա: Դա մեզ կդնի այն վիճակում, որ ավելի ազատ քննարկենք այդ բոլոր հարցերը: Ես չեմ հասկանում, թե ինչու չենք ավելի խորությամբ ուսումնասիրել մեր վերաբերմունքը Ցեղասպանության նկատմամբ, ինչպես հրեաներն են արել: Ողջակիզումից անմիջապես հետո «Մուսա լեռան 40 օրը» ամենակարեւոր գրքերից մեկն էր Իսրայելում: Հիմա նրանք ոչ մի գրականություն չունեն, որը հնարավորություն տար նրանց հասկանալ, թե ինչ է կատարվել իրենց հետ: Ճիշտ է, Ցեղասպանությունից հետո հայերը զրկվեցին մտավորականներից: Բայց սփյուռքում կային կինեմատոգրաֆիստներ, գրողներ... Շատերը տարված էին հարմարվելով: Մամուլյանը փորձեց ֆիլմ նկարահանել՝ ըստ «Մուսա լեռան» սյուժեի, բայց Թուրքիան այնպիսի ճնշում գործադրեց «Մետրո Գոլդուին Մեյեր» կինոընկերության վրա, որ ֆիլմը դադարեցվեց: Միակ անդրադարձը, որ ձեռք է տվել Հոլիվուդին, Էլիա Կազանի «Ամերիկա, Ամերիկա»-ն է: Լայն հասարակությունը միայն առանձին կադրեր է տեսել Ցեղասպանության մասին: «Մայրիկը» երբեք չի ցուցադրվել ամերիկյան մայրցամաքում:

Պարադոքսներ՝ ըստ Ատոմ Էգոյանի

- Համաձայն եք, որ «Արարատը» նկարահանելով՝ դուք իրականացրել եք ձեր կյանքի ֆիլմը:

- Ես օգտվել եմ պատեհ առիթից, քանի որ գործնականորեն հետս չէ նման ֆիլմ նկարել: Մենք պետք է ուշի-ուշով հետեւենք, որ ֆիլմը լայն տարածում գտնի: Ֆրանսիայում մենք իսկույն շահույթ ստացանք «ARP» ընկերության շնորհիվ, որն անմիջապես ֆիլմը գնեց դեռ նախնական սցենարի վիճակում: Իսկ ամերիկյան մայրցամաքով, բարեբախտաբար, կզբաղվի «Միրամաքսը»: Ես վախենում էի, որ հոլիվուդյան այս խոշոր կինոընկերությունը զիջի Թուրքիայի բազմաթիվ ճնշումներին: Օրինակ, Սուրբ ծննդյան տոնին «Միրամաքսը» էլեկտրոնային փոստով երկու հազարից ավելի նամակ էր ստացել՝ մեզ հետ կնքած պայմանագիրը խզելու պահանջով: Դրա փոխարեն կինոընկերությունը դիմել է խորհրդատուի: Վերջինս մի մեծ թղթապանակ է ներկայացրել այն ամենի մասին, ինչ առնչվում է Ցեղասպանությանը, դրա ճանաչմանը եւ Միացյալ Նահանգներին: Նա նույնիսկ հայտնել է, որ Ռոնալդ Ռեյգանը մի խոսակցության ժամանակ օգտագործել է «ցեղասպանություն» բառը: Բացի ՆԱՏՕ-ից, երբ Վայնբերգը՝ «Միրամաքսի» ղեկավարը, եկել էր Կան՝ ֆիլմի պրեմիերային մասնակցելու, հայտարարեց, թե իրեն հոգնեցրել է Վաշինգտոնում հիմնավորված թուրքական լոբբին, որը ժխտում է Ցեղասպանությունը, ինչպես ոմանք՝ Ողջակիզումը: Մեզ համար սա նշանակում է մեծ հաղթանակ:

- Ո՞ւմ է ուղղված ձեր ֆիլմը:

- Հայրենակիցներիս, ինձ, ամբողջ աշխարհին: Այն հանդիսատեսին, որը ոչինչ չգիտի: Իհարկե, որոշ տեսարաններ հասկանալի են միայն հայերին, բայց ֆիլմը նախատեսված է միջազգային շուկայի համար, հետեւաբար պետք է հասցեագրված լինի բոլորին եւ համապատասխան հատկանիշներն ունենա: Ուստի սխալներից խուսափելու նպատակով ես սցենարը հանձնել եմ հայ մասնագետների դատին: Ոչ մի ֆիլմ այդքան մանրակրկիտ ստուգման չեմ ենթարկել, իսկ սա նշանակում է, որ գիտակցում եմ իմ պատասխանատվությունը:«Արարատը», շատ առումներով, ավելի հուզական է, քան իմ մյուս ֆիլմերը, ինչի համար էլ արժանացա այն լրագրողների քննադատությանը, ովքեր նախկինում գնահատում էին ոճս: Նրանց կարծիքով, այս աշխատանքը բնորոշ չէ ինձ: Սա այնքան էլ պարզ չէ ինձ համար: Որոշ տեսարաններ լիովին համահունչ են այն ամենին, ինչ արդեն արել եմ նախկինում: Օրինակ, երբ Ռաֆֆին մախսատանն ասում է, թե ոչինչ չի վկայում, որ Թուրքիայում ինչ-որ բան է կատարվել, կինոխցիկը հեռանում է նրա դեմքից, մի քայլող կնոջ վրայից սահելով՝ անցնում գաղթականների թափորին, ցույց տալիս Արշիլ Գորկուն մոր հետ, ապա՝ միայն Գորկուն՝ հետագա տարիներին եւ վերջապես, նրա կտավը թանգարանում: Այդ շարժումը ժամանակի եւ տարածության միջով՝ պատկերի, ժամանակի ու ձայնի սինթեզը, իմ աշխատանքի ամենաանհատական կողմերից է: Ես կարծում եմ նաեւ, որ այս ֆիլմի հերոսներից մեկը պետք է

պատմությունը բառացիորեն պատմի օտարերկրացուն: Այլապես հանդիսատեսը չի հասկանա, թե ինչին է նա անդրադառնում: Ցեղասպանությունն ու հայկական մշակույթը իմ շատ ֆիլմերի թեմաներից են, բայց արծարծվել են որպես անհատների կյանքում գործող խորհրդավոր ուժ: Իսկ այստեղ, անհրաժեշտության բերումով, ավելին եմ ասել:

- Բայց ինչու՞ չեք նկարահանել այն, ինչ հայերն ակնկալում են, այսինքն՝ լայնածավալ կտավ՝ Սթիվն Սփիլբերգի ոգով:

- Մյուս ժողովուրդների պատմության մեջ հերվող աղետ չկա: Իսկ սա Հայոց ցեղասպանությանը համընդհանուր բնույթ է տալիս՝ փաստորեն դարձնելով մարդկության դեմ գործված ոճիր, որը հետեւողականորեն ժխտվում է: Ինչպե՞ս: Որո՞նք են դրա հետեւանքները մեզ համար: Սա մեր առանձնահատկությունը: «Շինդլերի ցուցակը» հիանալի գործ է: Բայց Ողջակիզման մեջ զարմանալին այն է, որ Գերմանիայի նման ժամանակակից ու նրբակիրթ երկիրը ընդունակ է եղել նման բարբարության: Այն տեսարանը, որտեղ գերմանացի սպան, դասական երաժշտության տակ, իր պատշգամբից կրակում է համակենտրոնացման ճամբարի բանտարկյալների վրա, մի քանի կադրով բացատրում է, որ այս ցեղասպանությունը դժվար է հասկանալ: Ինչ վերաբերում է մեզ, մարդկանց մեծ մասի պատկերացմամբ, այն տարիների Թուրքիան Եվրոպայի հիվանդ ճյուղավորումն է: Սա պակաս տղավորիչ չէ, քան հանկարծակի անցումը ժամանակակից քաղաքակրթությունից դեպի բարբարություն: Այս դեպքում բանը հանգում է այն եղանակին, որով մի հասարակություն կարող է պնդել իր մերժումը: Ողջակիզման երեխաները հոգեկան խեղվածք են ստացել, դա խոր հետք է թողել նրանց վրա, բայց շատ քիչ են այդ սյուժեով գրված դրամաները: Այս իմաստով, «Արարատը» կարող է դիմել հանդիսատեսների շատ լայն շրջանի, որովհետեւ խոսում է ոչ միայն այն եղանակի մասին, որով խեղվածքը խորանում է, այլեւ ցույց տալիս մարդկանց, թե ինչ կլիներ, եթե Գերմանիան իր մեղքը չընդուներ:

- Բայց դուք գիտակցու՞մ եք, որ ոմանք ակնկալում են ավելի դասական պատում Ցեղասպանության մասին:

- Այո: Եվ ավելի քան 85 տարի կար նման ֆիլմ

ստեղծելու համար: Ոչ ոք ինձ չի հուշել անելիքս, եւ իմ աշխատանքը անձնական է: Ես շատ եմ դրդել, փորձել եմ չշեղվել իմ ճանապարհից, ես խաչ գիտակցում եմ իմ ինքնությունը: Եվ «Արարատը» պատմում է իմ ինքնության, «ես»-ի մասին: Որքան էլ ոմանք փորձեն թելադրել, թե իմ ֆիլմն ինչպիսին պիտի լիներ, դա միանգամայն անօգուտ է եւ ոչ մեկին պետք չէ: Եթե նրանք այդքան լիավստահ են, թե այս գործն ինչպես կանեին, հաջողություն եմ մաղթում նրանց:

- Ինչ կասեք կատարվածը տեսողական պատկերների վերածելու անհրաժեշտության մասին, եթե նյութերը, հիրավի, շատ աղքատիկ են:

- Մեր դրամայի առանցքը, իրոք, այն մտայնությունն է, թե լուսանկարչական ապացույցներ չկան, որ ցուցադրենք: Բայց սա կեղծիք է. պատկերներ կան: Թուրքերը մեզ մեղադրել են, թե դրանք զեղծել ենք, ռետուշել: Եթե ես ցինիկ լինեի, ուղղակի կասեի, որ այդ լուսանկարները այնքան էլ պիտանի չեն, քիչ բան են ասում մարդկանց: Համենայն դեպս, մշակութային առումով, մեր վերաբերմունքը լուսանկարների հանդեպ տարօրինակ է: Ահա թե ինչու, ինձ կարեւոր էր թվում պատմությանը մասնակից դարձնել մի լուսանկարչի եւ Գորկու ու իր մոր լուսանկարը: Ես գիտակցում եմ, թե դա ինչ հուզական ներգործություն կունենա էկրանին ցուցադրվելիս: Նույն տղավորությունը կգործի, ինչ գաղթականների թափորը առաջին անգամ տեսնելիս, քանի որ միանգամից տեսնելի է դառնում այն, ինչ մինչեւ օրս չենք պատկերացրել: Հենց այդ վայրկյանին էլ ի հայտ են գալիս հարցեր. ո՞ր դեպքում է այս ադրումը օգտագործվում: Ո՞ր պահին է սա վերածվում մեր տառապանքի շահարկման: Խնդիրն այն է, որ նման ֆիլմի արթնացրած ադրումներն ինձ կասկածանքի են մատնում:

- Դա՞ է պատճառը, որ ամեն անգամ, երբ անցյալից ադրումներ են հառնում, դուք էկրանին վերադառնում եք ներկա ժամանակներ:

- Այո: Եվ թուրքերի արձագանքի մեջ հետաքրքիրը սա է: Երկու լրագրող, որոնց հաջողվել էր «Արարատը» ~~գտել~~ Կաննում, այն կարծիքին էին, թե ֆիլմը կարելի է ցուցադրել Թուրքիայում, այն պայմանով, որ կրճատվեն բռնաբարության երկու տեսարաններ: Դրանք այնքան ազդեցիկ են, որ անցնում են էկրանի սահմանը, եւ ոչ ոք չի հարցնում, թե ինչպես են արվել:

Շարունակությունը՝ էջ 9

Պարադոքսներ՝ ըստ Ատոմ Էգոյանի

Սկիզբը՝ էջ 9

Ըստ այդ երկու թուրքի, սա արդեն չափից դուրս է, քանի որ իրենց երկրում, որտեղ ռազմական վարչակարգ էր, համազգեստ հագած մարդիկ չէին կարող այդպիսի բաներ անել: Նրանց մեկնակետն այն էր, որ բռնաբարում էին գյուղացիներն ու քրդերը, իսկ թուրքական բանակը չէր կարող իրեն նման արարքներ թույլ տալ: Մինչդեռ ֆիլմի բոլոր դեպքերը վավերական են եւ բազմաթիվ որոնումների արդյունք: Վանեցիների հագուստից սկսած՝ բոլոր մանրամասները հավաստի են: Ես չեմ հանդիմանի նրան, ով հուզականորեն ազդված կլինի այդ տեսարաններից: Կաննի մրցութային, ֆիլմի ավարտից հետո տասը րոպե հոսնկայս ծափահարում էին: Իմ ֆիլմերից ոչ մեկը նման ընդունելության չի արժանացել: Հանդիսատեսները խիստ հուզված էին: Իսկ ինչու՞ ոչ: Ես չէ, որ պիտի ասեմ, թե «Արարատը» ինչպես պետք է նայել:

- Ձեր ուրոնցներից մեկն ասում է, թե ոչնչից չի երեւում, որ Թուրքիայում ինչ-որ բան է կատարվել:

- Այդ արտահայտությամբ ես անդրադարձել եմ մեր թափոր երեւակությանը, որովհետեւ ոչ ոք չպետք է նման բան ասի: Պիտի կարողանաս պնդել, որ մենք փաստարկների եւ երեւակայության կարիք չունենք, որպեսզի պատկերացնենք, թե ինչ է կատարվել: Մեր ընբռնողությունը պետք է բավականաչափ զորեղ լինի՝ իրեղեն աղացույցներ ունենալու անհրաժեշտությունից վեր ելնելու համար: Բայց խնդիրը դա չէ: Մենք ապրում ենք ոչ թե հոգեւոր, այլ նյութական աշխարհում: Ուստի նրանք, ովքեր հոգեպես դատարկ են, փնտրում են փաստարկներ, որոնք կարող են լինել փողը, ինչպես իմ «Լուսավոր գալիք» ֆիլմում, կամ քաղաքական ճանաչումը: Սա համակել է մեզ:

- Դա մոլորությո՞ւն եք համարում :

- Ըստ իս, այո, մոլորություն է: Հայկական ոգու հաղթանակը արվեստ ստեղծելու ընդունակությունն է: Մենք ունենք Գորկու նկարները, ունենք արվեստագետներ, սա է մեր փրկությունը: Խոսքը մեր մշակույթի մասին է, որը զարմանալիորեն հզոր է: Նայեք Կամբոջային: Եզմված երկիր է, որովհետեւ ցեղասպանության դրամայից հետո անզոր է եղել արվեստի գործեր ստեղծել:

- Ձեր կարծիքով արվեստը փոխարինո՞ւմ է քաղաքական ճանաչմանը:

- Ես չեմ կարող այդման հանդուգն լինել: Ոչ, այդ կարծիքին չեմ: Բայց կարող եմ ասել, որ արվեստն ինձ համար ապրածի հավաստիքն է, եւ մի մեծ փուլի հաղթահարում է, որ սա հաջողվել է արտահայտել:

- Բայց դա բավակա՞ն եք համարում:

- (Լռություն): Ոչ: Այլապես, ինչ խոսք, այս ֆիլմը չէի նկարի: Ես էլ եմ քաղաքական կենդանի: Արդեն երեք տարի է, ինչ Կանադայի խորհրդարանում ինչ-որ մեկը բարբաջանքներ է դուրս տալիս Հայոց ցեղասպանության մասին՝ անդրադառնալով թուրքերի դիրքորոշմանը: Ես կաղվել եմ մամուլի հետ՝ նրան պատասխանելու համար: Բայց ավելի լավ է այդ ամենի մասին խոսեք Արսինեի հետ. նա ավելի քաղաքականացված է, քան ես... Իմ կարծիքով, արվեստն այն է, ինչ մնում է շատերի հոգում, մինչդեռ քաղաքական ճանաչումը կարող է հետք չթողնել մարդկանց գիտակցության մեջ :

- «Արարատում» դուք ներկայացնում եք նաեւ թուրքական տեսակետը Ցեղասպանության մասին: Ձեզ նման արվեստագետն ինչպե՞ս է դա հանդիպադրում ճշմարտության հետ:

- Ցեղասպանության փաստը անվիճելի է: Ես հասկանում էի, որ ֆիլմի վերջում հանդիսատեսները կարող են հարց տալ, եթե ինքս ինձ հարց չտամ Ցեղասպանության իսկության մասին: Այդ պատճառով էլ կարեւոր համարեցի վերջում մի ծանուցում զետեղել, որ հենց այս պատմական դեպքերն էլ ներկայացնում են Հայոց ցեղասպանությունը: Փաստերը չեն վիճարկվում: Հարցերն առնչվում են դրանց մեկնաբանման եղանակին: Սա շատ խոր խնդիր է, քանի որ դատարանում մեկնաբանությունն է բնորոշում փաստերը:

Ես՝ որպես արվեստագետ, ֆիլմում ասում եմ, որ փաստը բնորոշելն ու իբրեւ մեկնաբանություն օգտագործելը եւ այդ փաստի ժխտումն ստեղծում են վերաբերմունքի սեփական մոդելը: Դա դառնում է իրականություն, ճշմարտություն: Ահա թե ինչն է ամենից վտանգավոր հայերի համար: Եթե մենք շատ ուշադրություն հատկացնենք այն եղանակին, որով այս երկրորդ իրականությունը բնորոշում է պատմական փաստերի մեր ընբռնումը, կդառնանք խոցելի: Ես ինքս բազմիցս հայտնվել եմ այդ վիճակում: Կաննում իմ ֆիլմի ցուցադրությանը հաջորդած մամուլի ասուլիսում մի լրագրող սկսեց խոսել այլ կողմից... Պիտի խիստ շրջահայաց լինել, որովհետեւ հանցագործության մեջ այլ կողմ չկա: Կարելի է հարցնել, թե ինչու է մեկը հանցանք գործել, բայց չի կարելի հանցագործի մեղքին թողություն տալ, քանի որ հարցրել ես, թե ինչու է նա այդ հանցանքը գործել: Այս կետում մենք դառնում ենք շատ խոցելի:

- Ինչպե՞ս կբնութագրեիք հայի ինքնությունը:

- Սովորական, ծեծված խոսքերի՝ աշխատասիրության, տոկունության կողքին, ինձ թվում է՝ կա մի բառ, որ բավական դիչ է գործածվել. դա մեծամտությունն է: Մենք մեծամիտ ենք, համարում ենք, որ ամեն ինչ մեզ մատչելի է: Որոշ իմաստով, խոսքը... փոքր-ինչ անսովոր հատկանիշի մասին է: Դա իր հետ ձգտում է բերում. մենք իրավունք ունենք այստեղ լինելու, ուստի եւ տխնում ենք դրա համար: Ես կարծում եմ նաեւ, որ մենք հումորից զուրկ ենք, անկարող՝ ինքներս մեզ վրա ծիծաղելու:

- Ձեզ է՞լ եք մեծամիտ համարում:

- Օ՜, այո: Եվ ես այդ մեծամտության ականատեսն եմ եղել մեր ընտանիքում: Երբ երեխա էի, հայրս մի անգամ գնացել էր «Մետրո Գոլդուին Մայեր» եւ հանդիպում խնդրել Քըրք Քըրքորյանի հետ: Քարտուղարուհին հարցրել էր, թե ծանո՞թ է նրան, իսկ հայրս պատասխանել էր. «Ոչ: Բայց ասացեք, որ հայ եմ»: Ահա, սա անցագիր է: Երբ հանդիպեցի ամերիկահայ դերասան Էրիկ Պողոսյանին, համոզված էի, որ նա ճանաչում է ինձ: Իզուր: Եվ սա էլ է հետաքրքիր: Մենք ելնում ենք այն սկզբունքից, որ մարդիկ պարտավոր են իմանալ, թե մենք ով ենք, եւ պատմական առումով ինչ է մեզ հետ կատարվել: Եթե նրանք չգիտեն, դա մեզ զայրացնում է, եւ մենք դառնում ենք մեծամիտ: Հենց այստեղ է, անկասկած, մեր ինքնության ուժեղ կողմը. եթե չկարծեինք, որ ուրիշները պարտավոր են իմանալ, թե մենք ով ենք, մեզ վաղուց կորցրած կլինեինք:

Ֆրանսերենից թարգմանեց
ՀԱՍԿԱՆ ԲՈՅԱՋՅԱՆԸ

«Ոսկե Ծիրան» միջազգային կինոփառատոնի բարեբեր սկիզբը

Ճշմարիտ կինոյի երկրպագուների համար «Ոսկե Ծիրանը» դարձավ հրաբալի կինոտոն, որ տարբեր երկրներից երեւան բերեց հայ եւ օտար կինոգործիչների, մերձեցրեց նրանց, նոր մտքեր ու գաղափարներ ծնեց:

Փառատոնին մասնակցած ամեն ոք ցավ էր ապրում միայն մի բանի համար, որ մեր հասարակությունը հեռացել է հայկական կինոարվեստից, քանի որ վերջին մի քանի տարիներին երեւանյան կինոթատրոնները հիմնականում հեղեղված են վարպետորեն նկարահանված ամերիկյան վաս ֆիլմերով, որովհետեւ հոլիվուդյան բարձրարժեք ֆիլմերը մեզ հասանելի չեն: Այս հարցին ավելի հանգիստ էին վերաբերվում օտար կինոգործիչները, միանգամայն բնական համարելով առաջին կինոփառատոնի նկատմամբ հասարակության պասիվությունը: «Պետք չէ վհատվել կինոցուցադրությունների ժամանակ դահլիճներում սակավ հանդիսատես լինելուց», ասում էին նրանք, կարեւորն առաջին քայլն էր, իսկ հանդիսատեսի թիվը տարեցտարի կավելանա: Կինոփառատոնի փակման ժամանակ աննկարագրելի ջերմ մթնոլորտ էր, առանց հուսահատական ու շինծու հնչեցանքների: Փառատոնը ցրեց մոայլության այն շղարշը, որով մեր կինոն պատել էր Հայաստանի կինեմատոգրաֆիստների միության՝ երկու ամիս առաջ հրավիրած համագումարը: Գուցե հենց դա էր պատճառը, որ միության նախագահը չէր ներկայացել փառատոնին, ի տես ու ի զարմանս բոլոր նրանց, ովքեր նման անտարբերություն դժվարանում են պատկերացնել: Ցավոք, դա է իրականությունը, հետեւաբար պետք չէ ողբալ, թե հայկական կինոն, մասնավորապես «Հայֆիլմը» կործանման եզրին է: Այնուամենայնիվ, կինոփառատոնի տնօրեն Հարություն Խաչատրյանը խնդրեց ծափահարել նաեւ անտարբերներին ու խանգարողներին:

Մրցանակների հանձնման արարողությունն ավելի քան ակնհայտ դարձրեց ժյուրիի անաչառությունը: Բեմ բարձրացող մրցանակակիրների հուզումնալից ու հումորով համեմված խոսքերը դրա ամենավառ վկայություններն էին: Մրցանակներ ստացած Ստեֆան Էլմաջյանը, Կոմս Շահբազյանը, Գեորգի Փարաջանովը մեծ պատիվ համարեցին «Ոսկե Ծիրանի» առաջին մրցանակին արժանանալը: Ուշագրավ էր, որ մրցանակների չարժանացած հայ կինոռեժիսորները նույնպես շնորհավորում էին միմյանց, որովհետեւ նրանց համար փառատոնի կայացումը իսկական տոն էր, տոն, որն ամեն տարի իրենցն է լինելու:

Ժյուրիների անդամները պակաս խանդավառված չէին, նրանց դեմքին նկատելի էր լավ գործին տեր կանգնած մարդու հպարտությունը: Նրանց անչափ գնահատելի աջակցությամբ Երեւանը դարձավ միջազգային կինոփառատոն անցկացնող քաղաք:

Ամենազարմանալին ու դժվար ըմբռնելին կինոփառատոնի՝ մեր մի շարք լրատվամիջոցների մակերեսային լուսաբանումն էր. համոզվելու համար բավական էր թերթել շաբաթ օրվա թերթերն ու հեռուստաալիքների երեկվա լրատվական թողարկումները: Փառատոնի գովազդային հովանավոր 31-ի փառատոնյան օրագիրը ներկայացվում էր կեսգիշերն անց, իսկ 32-ի բղթակիցն իր տեսանյութում զարմանալի համարեց, որ մրցանակակիրների մեջ ոչ մի օտար կինոռեժիսոր չկա: Մենք էլ, մեր հերթին, զարմանանք, որ լրագրողին մինչ երեկ հայտնի չէր, որ մրցութային ծրագրում ընդգրկված էին միայն հայ կինոռեժիսորների գործեր: Ի դեպ, նույն թղթակիցն իր նախորդ տեսանյութում եւս մեկ «բացահայտում» արեց, հայտնելով, որ Շառլ Ազնավուրին նվիրված երեկոյի ժամանակ «Մոսկվա» կինթատրոնում արտաքին ոչինչ չի եղել, ընդամենը ցուցադրվել են ֆրանսիական երկու ֆիլմեր՝ նրա մասնակցությամբ: Հետաքրքրական է, թե տվյալ դեպքում արտաքին ասելով՝ ինչ է պատկերացվել: Իսկ փառատոնին Արտավազդ Փելեշյանի չներկայանալու բացատրության պատասխանատվությունն իր վրա էր վերցրել «Առավոտ» հեռուստաընկերությունը, տաղավար հրավիրելով կինոռեժիսոր Տիգրան Խզմալյանին, որը, պարզվում է, Հայաստանում ամենատեր կապերն ունի Փելեշյանի հետ եւ տվյալ դեպքում ամեն ինչ արել է վերջինիս մասնակից դարձնելու համար: Ըստ Խզմալյանի, Փելեշյանը հրաժարվել է մասնակցելուց, որովհետեւ ցանկություն է հայտնել լինել խաղարկային ֆիլմերի ժյուրիի կազմում, մինչդեռ իրեն ընդգրկել են վավերագրականում: Կարծում ենք, տեղին կլիներ, որ Խզմալյանը Արտավազդ Փելեշյանի հետ հարցազրույց վարեր՝ նրա անունից հանդես գալու փոխարեն:

Փառատոնն ավարտվեց, իսկ խոսակցությունները կշարունակվեն, եւ ամեն մեկը եզրահանգումներ կանի իր նեղ կամ լայն մտահորիզոնով: Դա արդեն այնքան էլ էական չէ, որովհետեւ մի խումբ նվիրյալների ջանքերով «Ոսկե Ծիրանը» կյանք ստացավ, ապացուցելով, որ մեր կինոն դեռի լույս տանողները չեն նվազում, այլ բազմանում են:

ՌՈՒԲԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Նեղմիրը պատրաստեցին ՀԱՍԿԱՆ ԲՈՅԱՋՅԱՆԸ եւ ՍԻԲԻԼՈՒՅՍ ԳԱԼՍՏՅԱՆԸ

Վարդերի երկիրը. Եվրոմիության դարպասների մոտ

Հայերը Բուլղարիայում

Բուլղարիան Եվրոմիության դռներին մոտ կանգնած ամենաաղքատ երկիրն է: Բայց ոչ համախառն ներքին արդյունքի խիստ ցածր ցուցանիշները, ոչ ցածր աշխատավարձերն ու բարձր գները չեն խանգարել, որ Եվրոպականության «ոգին» արդեն իսկ թափանցի այստեղ: Այն զգացվում է ամենից առաջ մարդկանց անկաշկանդ կենցաղավարության մեջ: Հանդուրժողականություն միասեռամոլների հանդեպ, հենց մայթի ամենաանպատեհ տեղում համբուրվող զույգեր, ականջօղերով տղաներ, եւ սրանց հետ կողք-կողքի հաջողակ որսի փնտրտուքով գրանցահաս գնչուներ՝ մենակ կամ փոքրիկ խմբերով: Հայկական մեր պատվիրակության անդամներին Բուլղարիայում դեսպանատան աշխատակիցները բազմիցս զգուշացնում էին, որ զգուշանանք Սոֆիայի փողոցներով միայնակ զբոսնելուց, եւ հատկապես իրենց ծառայությունն առաջարկող կոչուն մարդկանցից հեռու մնանք: Այնուամենայնիվ, նույնիսկ մինչեւ կեսգիշեր թափառելով եւ ուսումնասիրելով Սոֆիայի փողոցները, հայ լրագրողներս, բարեբախտաբար, որեւէ նման միջադեպի չառնչվեցինք:

Եվրոպայի ազնվաբուն ոգին զգացվում է մաքուր ու կոկ փողոցներում, թթվածնով հագեցած օդում նույնիսկ: Այստեղ բարբարոսաբար չեն հոշոտում կանաչը, ինչպես երեւանում: Քաղաքներում տների կարմիր կղմինդրները թաղված են ծառ ու թփի մեջ, եւ կանաչն ու կարմիրը՝ մշտապես կողք-կողքի, վառվռուն տրամադրություն են ներարկում քաղաքային բնապատկերին: Սրճարանամոլություն եւս չկա, քանակը պատշաճության սահմաններում է, եւ Սոֆիայի Լոզենեց կոչվող կենտրոնական թաղամասում դրանց տասնապատիկ ավելի փիչ կարելի է հանդիպել, քան երեւանում: Եվ մի մանրամասն եւս՝ պուրակներում ու զբոսայգիներում, հակառակ մերի, առատ են ծաղիկները: Բուլղարական հանրահայտ վարդերի անուշահոտությունը ցողված է ամենուր: Ընդհանրապես, Բուլղարիան վարդերի երկիր է:

Տրանսպորտային հիմնական փոխադրամիջոցները տրամվայն են, տրոլեյբուսն ու միկրոավտոբուսները: Դրանք բոլորն էլ նոր ու փայլուն տեսք ունեն, որեւէ հնամաշ փոխադրամիջոց չնկատեցինք: Եվ ինչ է ուշագրավ, 1 միկրոավտոբուսը 9 հոգուց ավելի ուղեւոր չի վերցնում որպես կանոն: Դրա անհրաժեշտությունն էլ ամենեւին չկա: Կանգառներում երբեւէ չտեսանք խմբված մարդկանց, երթուղայիններն այստեղ հայտնվում են մերի համեմատ կայծակնային արագությամբ: Մենք ամեն պահ սփոփված էինք հիշել տրանսպորտային մեր ամենօրյա գողգոթան՝ բերներեւան լցված, բենզին խնայելու մոլուցքի պատճառով ժամը մեկ հայտնվող երթուղայիններ:

Բուլղարիայի պարագայում հակադրվելով մատերիալիստական ըմբռնումներին, թերեւս կարելի է հաստատապես ասել, որ այստեղ գիտակցությունն է որոշել մարդկանց կեցության մակարդակը: Եվրոպական պարտավորությունները թղթի վրա հերթով գրանցելը պարապ զբաղմունք է: Նախ պիտի ազատվել ասիական գիշատիչ բնազդներից:

Հայերը Բուլղարիայում

Նոր ժամանակներում, Հայաստանի անկախացումից հետո հայերի մեծ հոսք սկսվեց Բուլղարիա, եւ 10-12 տարի առաջ բուլղարահայ համայնքում նրանց թիվը հասնում էր 50-60 հազարի: Պաշտոնական տվյալներով, այժմ Բուլղարիայում ապրում է ընդամենը 20 հազար հայ:

Սոֆիայի կենտրոնում

Հայաստանից եկած հայերն ինչպես արագորեն թափանցել էին այստեղ, նույն արագությամբ հեռացան: Հետաքրքրական է, որ նրանց մեծ մասը հիմնականում վերադարձավ հայրենիք, եւ մի փոքրիկ հատվածը միայն գաղթեց ավելի Արեւմուտք:

Բուլղարահայ համայնքն այսօր բավականին միաբերն է. ե՛ւ քաղաքական համոզմունքներով, ե՛ւ տնտեսության մեջ դիրքով, ե՛ւ սոցիալական վիճակով բուլղարահայերը շատ չեն տարբերվում միմյանցից: Համայնքը բաժան-բաժան անող կուսակցություններ չկան, իսկ այն, ինչ կատարվում է Հայաստանում, նույնքան չի վրդովում համայնքի անդորրը: «Մենք Հայաստանի ներքին կյանքին խառնվելու իրավունք չունենք, քանի որ այնտեղ չենք ապրում», համայնքի տրամադրություններն այսպես է ձեւակերպում դեսպան Սետա Սեւանը: Փոխարենը, ինչպես ամենուր, այստեղ էլ մարդիկ տառապում են կարոտախտով: Հայկական երգի մի հնչյուն կամ փողոցում պատահաբար հնչած հայերեն մի խոսք բուլղարահայի հոգու խորքն է թափանցում:

Ժամանակին Բուլղարիայում նույնիսկ հայ գրչության կենտրոններ են գործել: Այսօր Պլովդիվ, Սոֆիա, Վառնա, Շումեն, Ռասեն, Բուրգաս քաղաքներում ցրված հայերը նույնիսկ մայրենի դպրոցներ չունեն: Օտարալեզու դպրոցներում հայկական դասընթացներ կազմակերպվում են, եթե անհրաժեշտ քանակի աշակերտներ են հավաքվում: Հայ երեխաներն ուսանում են Բուլղարիայի կրթության նախարարության ծրագրերով, հայկական դասագրքեր այս երկիր հասցնելու մասին Հայաստանում դեռ չեն հասցրել մտահոգվել:

Հայագիտական ամբիոնի բացումը Սոֆիայի համալսարանում, ուսանողների, ուսուցիչների ու գիտնականների փոխանակման ծրագրերը հայկականության արահետ կբացեն, եթե, իհարկե, մարմին առնեն եւ չփոշոտվեն բարեկամության համաձայնագրերում: Ջուլվելը հետք է Բուլղարիայում: Գրեթե նույն ճանապարհն անցած, ե՛ւ ճակատագրով, ե՛ւ պատմությամբ միանման հայերն ու բուլղարները, հարյուրամյակներ կողք-կողքի ապրելով, կենցաղը, սովորույթներն ու մտածելակերպն էլ են ընդհանրացրել: Եվ, բնականաբար, ոչ հայերի օգտին:

Բուլղարիայի՝ տարածքով ու բնակչությամբ երկրորդ՝ Պլովդիվ քաղաքում 5 հազար հայ է ապրում: Այս քաղաքի ամենահին ու շքեղ թաղամասերից մեկը գրավել են հայերը: Փոքրիկ առանձնատների արանքով սողացող նեղ, երկարուկ փողոցները, վարդերի ու քաջվարդերի առատությունը, զովասուն օդն իսկապես դրախտավայր են հիշեցնում:

Պլովդիվի փողոցներից մեկում մի բուլղարացի, չգիտես ինչպես, հաջողացել էր գտնել Սոֆիա եկած հայկական պատվիրակությանը, եւ մոտենալով յուրաքանչյուրիս, ստորագրություններ էր խնդրում հայոց ցեղասպանությունը խորհրդարանում ներկայացնելու կապակցությամբ: Բուլղարիայի պառլամենտում 2 պատգամավոր հայերի եւ համայնքի համադրիչ խորհրդի նախաձեռնությամբ ըստ երեւույթին սկսել են ինչոր բան անել այս ուղղությամբ: Այս երկրի բնակչության 10-12 տոկոսը թուրքեր են: Քաղաքական կյանքում ծանրակշիռ դիրք գրավող ԵԽԽՎ նախագահի տեղակալ Լյութֆին՝ նույնպես: Նա մեզ խրատեց այնքան էլ չտարվել անցյալով: Նկատի առնելով օբյեկտիվ ու սուբյեկտիվ միկրոկլիման բուլղարական պառլամենտում, ըստ ամենայնի ցեղասպանության ընդունման հարցն այնքան էլ շուտ չի մտնի այստեղ:

ԿԱՐԻՆԵ ՂԱՆԻԵԼՅԱՆ

Եվրոպայում գերմանացիներին չեն սիրում

Եվրոպայում առանձնապես չեն համակրում գերմանացիներին: Այդ են վկայում «Ռիդերս դայջեսթ» հանդեսի անցկացրած հարցման արդյունքները: Եվրոմիության 25 երկրներից 19-ում հարցերին պատասխանել են 4000 անձինք:

Հարցման տվյալների համաձայն, Եվրոպայում անվիճելի համակրանք են վայելում իսպանացիները, գնահատվում է բրիտանացիների հումորի զգացումը, հոլանդացիներին հարգում են նրանց հանդուրժողական վերաբերմունքի համար: Իսկ գերմանացիներին ֆշերն են սիրում. նրանց համարում են անբարյացակամ, բայց գործունյա մարդիկ:

Հանդեսի հուլիսյան համարում հրապարակված հարցման արդյունքները վկայում են, որ եվրոպացիները թուլություն ունեն Իտալիայի նկատմամբ: Մասնավորապես իտալական խոհանոցը դուր է գալիս եվրոպացիների 40 տոկոսին, ֆրանսիականը՝ 23 տոկոսին: Հարցման մասնակիցների մեծ մասը Իտալիան համարում է բնակության համար ցանկալի երկիր, իսկ 34 տոկոսն իտալացիներին համարում է շատ կրքահարույց:

Նախասիրությունների սանդղակում երկրորդ տեղը զբաղեցնում է Իսպանիան, երրորդը՝ Ֆրանսիան: Եվրոպայի «առավել համակրելի» ժողովուրդների ու պետությունների ցանկը եզրափակում են Լեհաստանը, Ռուսաստանը, Հունգարիան եւ Սլովակիան: Ավստրիան եւս հայտնվել է ցանկի վերջնամասում:

Հարցման մասնակից եվրոպացիների 22 տոկոսը գերմանացիներին ամենից փիչ է սիրում: Նրանց ինքնահավանությունը եւ շեշտված ազգայնական վարքագիծը բազմաթիվ եվրոպացիների տարակուսանքն են հարուցում: Եվրոմիության 11 երկրներում Գերմանիան դասվել է «թիվ 1 հակակրանքի» կարգին:

«Եվրոպացիների մեջ ովքե՞ր են առավել անբարյացակամ» հարցին պատասխանելիս գերմանացիների անունն է նշել հարցման մասնակիցների ամենամեծ մասը՝ 27 տոկոսը: Մյուս կողմից, գերմանացիները լավագույն ցուցանիշ են արձանագրել ջանադրության ասպարեզում: Հարցման մասնակիցների 45 տոկոսը նրանց համարում է առավել գործունյա եվրոպացիներ: Երկրորդ տեղում զվեյցարացիներն են՝ 11 տոկոս:

Մասխադովը Մոսկվային առաջարկում է բանակցություն կամ 20-ամյա պատերազմ

Չեչեն գրոհայինների առաջնորդ Ասլան Մասխադովը հայտարարել է, թե ինքը պատրաստ է բանակցել Մոսկվայի հետ, եթե չեչեն ժողովրդին տվեն անվտանգության երաշխիքներ: Ինտերնետում երեկ հրապարակված հարցազրույցում նա օգոստոսի 29-ին կայանալիք Չեչնիայի նախագահական վաղաժամկետ ընտրությունների կապակցությամբ ասում է. «Ռուսաստանի ղեկավարները շփոթության մեջ են եւ չունեն որոշակի ծրագիր: Նրանք փորձում էին Քադիրովի այրմնոց ձեռքերով ամենակեղտոտ աշխատանքն իրականացնել Չեչնիայի ժողովրդի եւ պետության դեմ: Մոսկվայում պետք է հասկանան, որ նույնիսկ տասնյակ տարիների պատերազմի դեպքում էլ իրենք հաղթանակի չեն հասնի»:

Մասխադովի կարծիքով, Չեչնիայում այդ ամենահեղությունը կարելի է դադարեցնել միայն բանակցության եւ զինադադարի միջոցով: «Քանի որ նրանք խաղաղություն չեն ուզում, երկարատեւ գլխացավանք կունենան», սպառնացել է նա: Մասխադովի խոսքերով, չեչեն գրոհայինները պատրաստվում են անցնել հարձակողական գործողությունների: «Մենք պետք է մեր երկրից վռնդենք ռուսներին: Դա մեր պարտքն է: Ոչ մի ընտրություն: Ժողովուրդը դա գիտի: Ինձ ենթակա ուժերը բավարար են եւս 20 տարի պատերազմելու համար», հայտարարել է Մասխադովը:

Իրաքի ղեկավարությունը դեմ է հարեւանների խաղաղարար ուժերի տեղաբաշխմանը

Իրաքի նոր ղեկավարությունը դեմ է Իրաքում հարեւան երկրների խաղաղարար ուժերի տեղաբաշխմանը: Այդ մասին «Ալ Արաբիա» հեռուստաընկերության թղթակցին հայտարարել է վարչապետ Իյադ Ալլաուին:

Նա նշել է, որ տվյալ որոշումն ընդունվել է երկրի էթնիկական եւ կրոնական բազմաթիվ համայնքների հարաբերությունների սրում թույլ չտալու նպատակով: «Մեր հարեւանները մեզ անհամեմատ շատ կօգնեն, եթե ուժեղացնեն իրենց սահմանների հսկողությունը եւ կասեցնեն դրանք խախտելու փորձերը», ավելացրել է վարչապետը:

Անցյալ շաբաթ Հորդանանը պատրաստակամություն էր հայտնել զորք ուղարկելու Իրաք, եթե վերջինս նման ցանկություն արտահայտի: Իրաքի արտգործնախարար խոշիար Զեբարին մերժել էր առաջարկը, ասելով, թե նախընտրելի է խաղաղարար ուժեր ընդունել ոչ հարեւան արաբական երկրներից: Այս կապակցությամբ արդեն իրենց ծառայություններն են առաջարկել Եմենի եւ Բահրեյնի կառավարությունները:

Վարչապետ Ալլաուին օրերս հայտարարեց, որ զենքը կամովին վայր դնող իրաքցի բոլոր պարտիզանները ներում կստանան: Նրա խոսքերով, բոլոր գրոհայինները պարտավոր են հարգել օրենքները եւ այլեւս չխախտել դրանք: Դա վերաբերում է նաեւ շիա մահմեդականների հոգեւոր առաջնորդ Մուքթադա ալ Սադրին:

Նորվեգիան զորքը դուրս բերեց Իրաքից

Նորվեգական զորաբաժինը երեկ դուրս է բերվել Իրաքից: Հարավային Իրաքի Բասրա քաղաքի շրջանում տեղաբաշխված 130 նորվեգ զինծառայողներն արդեն հայրենիք են վերադարձել: Նորվեգիայի արտգործնախարար Յան Պետերսենը BBC-ի թղթակցին ասել է, թե զորքի դուրսբերման որոշումն ընդունվել է այն կապակցությամբ, որ նորվեգ զինվորականները ներկայումս խաղաղարար առաքելություն են իրականացնում Աֆղանստանում եւ Կոսովոյում: «Մեր զինծառայողները չեն կարող միաժամանակ լինել ամեն տեղ», նշել է Պետերսենը, ընդգծելով, թե զորաբաժինն Իրաքից դուրս բերելու որոշումը «քաղաքական բնույթ չի կրում»:

Բուշն աշխատավայրում չի խորշում հայհոյանքներից

ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշն աշխատանքային ժամերին հաճախ օգտագործում է անընդունելի արտահայտություններ: Այդ մասին տեղեկացնում է «Յու Էս Նյուզ ընդ ոռլդ ռիփորթ» շաբաթաթերթը՝ վկայակոչելով նախագահի երկու խորհրդականների: Խորհրդականներից մեկն ասել է, որ նախագահը մերժելի արտահայտություններ օգտագործում է սովորաբար նվազ պաշտոնական իրավիճակներում: «Իր աշխատասենյակում նա համեմատաբար զուսպ է: Բայց այլ տեղերում, իրեն ազատ զգալով, նա հաճախ է հայհոյական խոսքեր ասում», հայտնել է մյուս խորհրդականը:

Ընդսմին հանդեսը տեղեկացնում է, որ հենց Բուշն է փոխնախագահ Դիկ Չեյնիից պահանջել, որ նա ներողություն չխնդրի նախանցյալ շաբաթ Սենատում թույլ տված անվայել արտահայտության համար: Դեմոկրատ սենատոր Պատրիկ Լիհիի հետ բանավիճելիս Չեյնին օգտագործել էր հայհոյանք՝ մեծ սկանդալ առաջացնելով Վաշինգտոնում: Լիհին CNN հեռուստաընկերության եթերում հայտարարեց, որ ինքը «ցնցված» է Չեյնիի վարքագծից:

Մինչդեռ Սպիտակ տան աշխատակազմի ղեկավար Սթոք Մալլելանն ասում է, թե նման միջադեպեր ժամանակ առ ժամանակ պատահում են, եւ «նախագահը դա խնդիր չի համարում»:

Չեյնիի անձնական բժիշկը հեռացվել է թմրամոլության պատճառով

1995 թվականից ԱՄՆ փոխնախագահ Դիկ Չեյնիին բուժած բժիշկը վերջերս հեռացվել է նրա բուժանձնակազմից: Ջորջ Վաշինգտոնի անվան բժշկական կենտրոնում «Նյու Յորք թայմսի» թղթակցին ասել են, որ Չեյնիի անձնական բժիշկ Գարի Մալակոֆը խմբի առաջատար բժիշկներից էր եւ իրավասու էր հրապարակավ ներկայանալու փոխնախագահի առողջական վիճակի հարցերը:

Թերթը տեղեկացնում է, որ թմրանյութերի նկատմամբ Մալակոֆի թուլությունը հայտնի էր դարձել 1999 թ.: Բժիշկն ինքն էր Չեյնիին պատմել իր հիվանդագին հակման մասին: Հիշյալ բժշկական կենտրոնի ղեկավարությունը Մալակոֆին կարգադրել էր բուժընթաց անցնել, իսկ հետո պարբերաբար ներկայանալ անկախ հանձնաժողովին, որը պետք է հավաստեր, թե նա այլեւս թմրադեղ չի ընդունում:

Այս տարվա մայիսին հանձնաժողովը եզրակացրեց, որ Մալակոֆը «չափազանց թույլ» է եւ այլեւս չի կարող բուժել Չեյնիին: Դրանից հետո նրան պաշտոնանկ արեցին:

Պ. Ք.

«Էջմիածնի զանձերը» Սան Պաուլոյում

Մայիսի 7-ից հունիսի 20-ը բրազիլական Սան Պաուլո քաղաքի մայր թանգարանում (տիենոկոտեկա) աննախադեպ հաջողությամբ ու բեղությամբ ցուցադրվեց «Էջմիածնի զանձերը» հավաքածուն: Այս առիթով Բրազիլիա մեկնած արվեստաբան Շահեն Խաչատրյանը վերադարձին իր տպավորությունները հայտնեց «Ազգ» օրաթերթին:

- Վեհափառ Հայրապետի՝ Հարավային Ամերիկայի երկրներ առաջին ուղեւորության առիթով եւ իր ներկայությամբ մայիսի 7-ին Բրազիլիայի Սան Պաուլո քաղաքի պետական թանգարանում բացվեց «Էջմիածնի զանձերը» ցուցահանդեսը: Շտապեմ ասելու, որ բազմաթիվ ցուցահանդեսներ եմ տեսել, բայց այդպիսի բեղության առնչվեցի առաջին անգամ: Երկրորդ հարկում ցուցահանդեսի մուտքը կազմել էր Էջմիածինը խորհրդանշող խոշոր կամարը: Երեք դահլիճների բոլոր պատերը ծածկված էին թավշյա վարագույրներով, սրահներում հատուկ պատրաստված սյուները վերնամասերով ներսից լուսավորող կամարներ էին կազմում: Յուրաքանչյուր ցուցանմուշի համար պատերի եւ սյուների մեջ լուսավորված ցուցադրափեղկ էր բացված: Ներքին ողջ տարածությունն ընկալվում էր իբրեւ եկեղեցի, դահլիճներում բացման պահից մինչեւ փակումը հնչում էր հայոց պատարագը: Ստեղծված հոգեպարար մթնոլորտն առանձնահատուկ հմայք ու խորհուրդ էր հաղորդում ցուցադրվող յուրաքանչյուր նմուշին: Այցելուն իրեն զգում էր հայկական 1700-ամյա քրիստոնեական տաճարում: Այս ամենը հատուկ նախապատրաստել էր թանգարանի ցուցադրական բաժնի ծարտարապետը:

Մեկ ու կես ամիս տեւողությամբ ցուցահանդեսի մասին ամբողջ Բրազիլիայով մեկ հեռուստատեսային ութ հաղորդում եղավ, բրազիլական գրեթե բոլոր թերթերը արձագանքեցին հիացումի բացառիկ արտահայտությամբ: Ցուցահանդեսն ունեցավ շուրջ 40.000 այցելու:

- Ովքե՞ր եւ ինչպե՞ս կազմակերպեցին ցուցահանդեսը, ինչպիսի՞ նախապատրաստական աշխատանքներ էին կատարվել Սուրբ Էջմիածնում:

- Ցուցահանդեսի կազմակերպման աշխատանքները ղեկավարում էր Էջմիածնի թանգարանների տնօրեն Փառեն եպս. Ավետիքյանը: Նախապատրաստական-կազմակերպչական աշխատանքներում ակտիվ մասնակցություն ունեցավ Էջմիածնի թանգարանների փոխտնօրեն, վերականգնող նկարիչ Անդրանիկ Անտոնյանը: Ցուցահանդեսի համար կարեւոր նշանակությամբ կատալոգին անհրաժեշտ բոլոր գործերի սլայդները շատ արագ, հմտությամբ եւ բարձր որակով պատրաստեց լուսանկարիչ Պողոս Պողոսյանը, իսկ առաջաբանը հեղինակեցի ես: Այս ցուցահանդեսը «Էջմիածնի զանձերի» նախորդ ցուցադրություններից (Վիեննա, Հելսինկի, Սանկտ Պետերբուրգ, Մոսկվա) տարբերվում էր նրանով, որ բացի ցուցանմուշների լուսանկարներից, կատալոգում զետեղված էին նաեւ հայ ճարտարապետության լավագույն կոթողների ու խաչքարերի գունավոր լուսանկարները: Կատալոգը լույս տեսավ Սան Պաուլոյում՝ պորտուգալերենով եւ անգլերենով:

- Այսօր մեծ ճիգեր եւ միջոցներ են անհրաժեշտ այդպիսի բեղեռ հրատարակություն իրականացնելու եւ նման ցուցահանդես կազմակերպելու համար: Աջակցեցին արդյոք տեղի հայ գաղութը կամ անհատ նվիրատուները:

- Երեք տարի առաջ ՀՀ նախագահի Բրազիլիա կատարած այցի առիթով «Սուֆիզա» բանկի մեծ ճեմասրահում կազմակերպվեց հայ գեղանկարչության «Երեք սերունդ» ցուցահանդեսը: Նույն բանկի նախագահ Վարուժան Բուրմայանը նկատի առնելով Վեհափառի այս այցի նշանակությունը՝ նախաձեռնեց «Էջմիածնի զանձերը» ցուցահանդեսի կազմակերպումը՝ հոգալով դրա հետ կապված բոլոր ծախսերը:

Երբ ես գտնվում էի Բրազիլիայում, իր սեղանին պատահմամբ նկատեցի պորտուգալերենով լույս տեսած գրքեր՝ Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը», «Թեհլիրյանի դավադրությունը», 1916 թ. անգլիական պառլամենտի անդամ Բրայսի Հայոց ցեղասպանության մասին ելույթը եւ մեկնաբանությունը, եւ այլն՝ հրատարակված սեփական նախաձեռնությամբ, առաջաբաններով եւ հովանավորությամբ: Ասեմ նաեւ, որ Երեւանում «Սարգիս Խաչենց» հրատարակությամբ լույս տեսած «Խոան Միրո. Սա իմ երազների գույնն է. Զրույցներ Ժորժ Ռայարի հետ» հրաշալի գիրքը նույնպես հովանավորել է Վարուժան Բուրմայանը: Ես մտածեցի, որ նման արտամոս վերաբերմունքը հանդեպ հայ կյանքն ու հայ մշակույթը, դրանցով ապրող Բուրմայան հայորդու էությունն է: Ինքն այդ մասին բնավ չէր խոսում եւ ես զարմանում ու հիանում էի նրա համեստությամբ, նա դա համարում էր միանգամայն բնական վիճակ: Ահա մի մարդ, որ իր ժողովրդին օգտակար հասարակությանը մշակույթի միջոցով ծանոթացնելու գիտակցումն ունի եւ իրագործում է դա: Ինձ համար դա եզակի դեպք է:

Ցուցահանդեսի կազմակերպչական աշխատանքներին մեծապես օգնեցին մեր հայրենակից Օշին Մոսինյանը եւ թանգարանի տնօրեն Մարսելլո Առաուժոն, որոնք նախապես այցելել էին Երեւան՝ ուսումնասիրելու ցուցադրվելիք նյութը: Վերջինիս չափագրումների, յուրաքանչյուր ցուցանմուշի արժեքի գնահատման հիման վրա մշակվեց այդ ցուցահանդեսի ներկայացման ձեւը՝ եկեղեցական միջավայր եւ մթնոլորտ ստեղծելու հրաշալի գաղափարը:

- Կարո՞ղ եք այդ օրերից որեւէ հետաքրքրական, յուրահատուկ դրվագ հիշել:

- Շատ տպավորված եմ, ամեն ինչ մտածված էր շատ գեղեցիկ եւ իմաստավորված էր: Բայց հիշեմ մեկ դրվագ. թանգարանի տնօրենությունը եւ Վարուժան Բուրմայանը 3 ժամով Գեղարդը թանգարանից հանելու թույլտվություն էին վերցրել՝ Սան Պաուլոյի հայկական մայր եկեղեցում ջրօրհնեքի արարողության համար: Հանդիսավոր վեհությամբ մետաքսե ճոմակ գործվածքով փաթաթված, հատուկ մեքենայով Գեղարդը տարվեց հայոց եկեղեցի: Պատարագիչը Բրազիլիայի հայոց թեմի առաջնորդ Տաքեւ արք. Ղարիբյանն էր: Այդ հանդիսավոր, հուզիչ արարողությունն ինձ մեկ անգամ եւս ստիպեց սարսռտով վերադրել Սբ. Էջմիածնի յուրաքանչյուր մասնիկի խորհրդավորությունը:

- Պրն Խաչատրյան, դուք նաեւ դասախոսությունների շարք ունեցաք Սան Պաուլոյում եւ Բուենոս Այրեսում: Այդ մասին, խնդրեմ:

- Ցուցահանդեսի բացմանը հաջորդող յուրաքանչյուր երեքշաբթի կազմակերպվում էր հայոց կյանքին եւ մշակույթին նվիրված դասախոսություն: Առաջին դասախոսությունը Էջմիածնի գանձերի՝ խաչերի, բուրվառների, մասունհատուքների, սկիհների, ծածկոցների, դրանց ստեղծման պատմության, դերի ու նշանակության մասին, ներկայացրեց «Էջմիածին» հանդեսի գլխավոր խմբագիր Վարդան Դեւրիկյանը: Բրազիլահայ գաղութի պատմությամբ դասախոսություններով հանդես եկան Սոսի Ամիրալյանը, Բրազիլիայի համալսարանի պրոֆեսոր Հայկանուշ Սարյանը եւ ուրիշներ: Վերջին երկու ընդգրկուն դասախոսությունները նվիրված էին 19–20-րդ դդ. հայ կերպարվեստին (Հովնաթանյան, Այվազովսկի, Բաշինջաղյան, Սարյան, Մ. Ավետիսյան, Ե. Քոչար, Արշիլ Գորկի), ներկայացրի ես՝ զուգորդելով սլայդների ցուցադրությամբ: Թերեւս հետաքրքրությունը դեպի հայ նոր շրջանի կերպարվեստը պատճառ դարձավ կազմակերպելու իմ այցելությունը Բուենոս Այրես, որտեղ ելույթ ունեցա հայկական երեք դպրոցների բարձր դասարանների աշակերտության համար:

- Այդ շրջագայության ընթացքում ինչի՞ց ավելի տպավորվեցիք կամ զգաստացիք հայրենի հայաստանցի մտավորական:

- Նախ ասեմ, որ այստեղ հայն իրեն բնավ օտար չի զգում: Հոգեբանորեն հայերը ձուլված են երկրին, օտարի զգացողություն չունեն: Առանձնապես կուզեմ նշել մի երեւույթ. ամեն ուրբաթ Բարեգործական միության դահլիճում կազմակերպվում է յուրահատուկ երեկո-ընթրիք, որին հայերից բացի մասնակցում են նաեւ արգենտինացիներ, եւ նրանք գալիս են հատուկ հայկական ճաշատեսակների համար: Խոհանոցում աշխատում են հայ մայրերը, իբրեւ մատուցող՝ նրանց զավակները՝ հայկական դպրոցների ավարտական դասարանների աշակերտները: Իսկ հասույթն ամբողջությամբ օգտագործվում է իբրեւ «վերջին եւ առաջին դաս»՝ շրջանավարտների այցը Հայաստան կազմակերպելու համար: Ինձ առանձնապես ոգեւորեց նման միջոցներով հայ սերունդը դաստիարակելու այս ոգին եւ ես հիմա բրազիլական այցիս թարմ տպավորություններով՝ սպասում եմ նրանց Երեւանում: Կարծում եմ, որ նման առնչություններն ու հանդիպումները պետք է շարունակական լինեն, միայն այսպես է հնարավոր պահպանել կապը հայության տարբեր հատվածների միջեւ:

- Պրն Խաչատրյան, հայկական ոգով դաստիարակության համար նշանակություն ունենո՞ւմ են նման ցուցահանդեսները, հանդիպումները:

- Նշեմ մի կարեւոր հանգամանք: Նման ցուցահանդեսները ես չեմ դիտում իբրեւ զուտ մշակութային երեւույթներ: Ճանաչողական-գեղագիտական նշանակությունից բացի դրանք նաեւ գործնական բնույթ են կրում: Այս առնչությամբ նկատի ունեմ Վեհափառ հայրապետի այցելությունը, որ անջնջելի ու անմոռաց տպավորություն գործեց բրազիլահայ համայնքի հասարակական եւ հոգեւոր կյանքում: Նրա ջերմ ելույթները, հայրապետական օրհնությունը, մտերիմ խոսքը, ոգեւորելուց բացի, գործուն նշանակություն ունեցավ համայնքի հոգեւոր կյանքի զորացման վրա, շոշափելիորեն նպաստելով համայնքի հայապահպանման խնդրին:

Հարցազրույցը՝
ՄԵԼԻՆԵ ԲԱԴԱԼՅԱՆԻ

ՑԵՌՆԱՐԿՆԵՐ

Հոբելյանական համերգ Գառնու տաճարի մոտ

«Հայաստան ծառատունկ» ծրագիրը եւ Հայաստանի կամերային նվագախումբը՝ Առամ Ղարաբեկյանի ղեկավարությամբ ուրբաթ օրը, հուլիսի 2-ին, Գառնու հեթանոսական տաճարի տարածքում բացօթյա երեկոյան գալա համերգ էին կազմակերպել: Համերգը նախաձեռնվել էր ի տոնումն «Հայաստան ծառատունկ» ծրագրի Հայաստանի կանաչազարդման 10-ամյակի: Միջոցառմանը ներկա էին 300-ից ավելի տեղական ու օտարերկրյա պատվիրակներ, դեսպաններ: Մի քանի տասնյակ տեղական եւ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, որոնք հանդիսանում են ծառատունկ ծրագրի գործընկերներ, ներկա գտնվեցին համերգին:

Սա իրականում հիասքանչ երաժշտության եւ լույսի համադրությամբ ստեղծված ներկայացում էր, որը տեղի ունեցավ հնամյա ծառերի գրկում:

«Հայաստան ծառատունկ» ծրագիրը հիմնադրվել է 1994 թ. Հայաստանի ամենամութ եւ ամենացուրտ տարիներին՝ նպատակ ունենալով Հայաստանի բնությունը պահպանելով արգելել երկրի կայուն աղագան: Հիմնադրված լինելով սփյուռքահայերի հանգանակությունների շնորհիվ՝ ծառատունկ ծրագիրը տնկել եւ վերականգնել է 530 հազար ծառ մոտ 500 տարբեր վայրերում՝ Գյումրուց մինչեւ Գորիս:

Ժանսենի «Պատերը» Փարիզի «Մատինյոն» պատկերասրահում

Փարիզի Մատինյոն փողոցում (որտեղ կառավարության նստավայրն է) գտնվող համանուն պատկերասրահում բացվել է ֆրանսահայ նշանավոր նկարիչ Ժանսենի «Պատեր» խորագրով ցուցահանդեսը: «Աշխարհ» թերթը տեղեկացնում է, որ այնտեղ ցուցադրվող գործերը պալատների, ամրոցների պատեր չեն, այլ Հարավային Եվրոպայի սրբավայրերի, խրճիթների, եկեղեցիների, հասարակ տների պատեր: Այլ խոսքով, պատկերված են «կենդանի» պատեր, փակ եւ բաց լուսամուտներ, փեղկեր, դռներ, ծաղկամաններ, որմնախորշեր, մանուկների նկարներ եւ այլն: Այս ամենը ցույց է տալիս կյանքի ընթացքը, չնայած նկարների մեծ մասում մարդիկ չեն երեւում եւ հավանաբար պատերի հետեւում են:

Այցելուներին հիացմունք է պատճառում գույների անչափ նուրբ ու մանրակրկիտ ծիածանային մշակումը, որը Ժանսենի արվեստի գաղտնիքներից մեկն է: Արծաթավուն-սպիտակ, գորշ-սպիտակ, մոխրագույն, սեւ-մոխրագույն, դեղնակարմիր-վարդագույն, նարնջագույն-վարդագույն... Սա գիտակ մարդու աշխատանք է, որտեղ գույնը երբեմն ձեր կարծածը չէ, անսահմանելի է, անասելի, կենդանի, թրթռուն եւ սերունդների ու տարեշրջանների արտացոլանքն է:

Ժանսենի պատերն արտահայտում են թե խստակեցություն եւ թե ուրախություն, ցուցադրելով մարդու աշխատանքը եւ դրա վրա բնության թողած ազդեցությունը: Իսկ կանանց դիմանկարներում պատկերված են ջահել, բայց հոգնած, աշխատանքից հյուծված կանայք: Այստեղ եւ պատկերներն ասես թափանցիկ լինեն:

Հունիսին բացված այս ցուցադրությունը գործելու է մինչեւ հուլիսի վերջը: Միաժամանակ հաղորդվում է, որ հուլիսի 10-ից մինչեւ հոկտեմբերի 17-ը Փարիզ-Ռուան ավտոճանապարհի 120-րդ կիլոմետրի վրա գտնվող Վասկեոյ դղյակում ցուցադրվելու են Ժանսենի չորս տասնյակ յուղաներկ կտավներ, գծանկարներ եւ փորագրանկարներ:

Պ. Ք.

Հայաստանի ազգային գրադարանի օրը

Ազգային գրադարանի տնօրենությունը կազմակերպել է միջոցառումների շարք՝ նվիրված ազգային գրադարանի օրվան՝ հուլիսի 7-ին: Հանդիսավոր բացումը կկայանա նույն օրը՝ ժամը 10-ին, Հայաստանի ազգային գրադարանի բակում: Այնուհետեւ, ծրագրում գեղարվեստական մասն է՝ ցուցահանդես «Վերնիսաժ-2», գեղանկարի, գրաֆիկայի, քանդակի եւ գրքի տոնավաճառ: Իսկ Թումանյանական մասնաճյուղում՝ «Գիրք-2003» ցուցահանդեսի բացումը, «Անուշ» օպերայի էլեկտրոնային սկավառակի շնորհանդեսը, «Լավագույն գրադարանավար» մրցույթի ամփոփումը եւ աշխատանքային հոբելյանական պատվոգրերի հանձնման արարողությունը:

Տնօրենությունը խոստանում է հետաքրքրական ու ծավալուն ծրագիր, որտեղ ամփոփված կլինի Հայաստանի ազգային գրադարանի պատմությունը:

Մ. Մ.

«Հայաստանը երգերում»

Օրեր առաջ տոնական տրամադրությունն ու թախիծը հավաքել էր մտավորականների, ճանաչված քաղաքական գործիչների ու հարգարժան շատ հյուրերի Կոմիտասի անվան կամերային երաժշտության տուն, որտեղ կայացավ «Հայաստանը երգերում» գրքի 2-րդ հատորի շնորհանդեսը: Ճիշտ երեք տարի առաջ նույն սրահում կայացավ գրքի առաջին հատորի ներկայացումը, որը նվիրված էր սիրված ընկեր, ամուսին, ճանաչված պետական քաղաքական գործիչ Յուրի Բախչյանի հիշատակին, եւ որի առաջաբանը գրել էր երջանկահիշատակ Մեսրոպ արք. Աշջյանը: Հիշատակի երեկոն բացեց Յուրի Բախչյանի կինը՝ Անահիտ Բախչյանը, նշելով, որ գրքի 2-րդ հատորի առաջաբանը նույնն է, ինչ առաջինում էր: «Հայաստանը երգերում» ժողովածուի 2-րդ հատորում տեղ են գտել Դանիել Երաժշտի մշակած Մեսրոպ Մաշտոցի, Գրիգոր Նարեկացու, Կոմիտաս կաթողիկոսի, Ներսես Շնորհալու, Կոմիտաս վարդապետի եւ այլոց շարականները, տաղերը, Սայաթ-Նովայի, Գուսան Աշոտի երգերը, ինչպես նաեւ ժողովրդական, ազգային-հայրենասիրական երգեր՝ ներկայացված նոտաներով: Ժողովածուն բարձր գնահատեց նաեւ մասնագետ Ռուբեն Ալթունյանը ու նշեց, որ այն մեծ արժեք ունի հայկական երգիչների, կամերային համույթների, բոլորի, ազգային ժառանգությունն ուսումնասիրողների համար: Անուշ, Յուրի Բախչյանի կյանքը շարունակվում է 1999 թ. հոկտեմբերի 27-ից հետո, երբ դաժանորեն զոհ դարձավ չար ձեռքին ու չար ուժին:

Շնորհանդեսին մասնակցում էին «Շարական» համույթը (գեղ. ղեկ. Դանիել Երաժիշտ), Յուրի Բախչյանի անվան մանկական ֆիլհարմոնիայի ժողգործիքների համույթը (գեղ. ղեկավար՝ Ռաֆայել Մանուկյան):

ՄԱՐԻՆԵ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Հունական հրաշքը կայացավ

Եվ այսպես, շուրջ մեկ ամիս ֆուտբոլասերների ուշադրության կենտրոնում հայտնված ֆուտբոլի Եվրոպայի առաջնությունը հասավ վերջնագիծը: Այն ավարտվեց Հունաստանի հավաքականի փառահեղ հաղթանակով: Մրցաշարը սկսելով պորտուգալացիների նկատմամբ տոնած հաղթանակով, հույները այն ավարտեցին նույն մրցակցին պարտության մատնելով նաեւ վճռորոշ խաղում: Եզրափակիչում էլ աչի ընկնելով խաղային բարձր կարգապահությամբ, հուսալի պաշտպանությամբ եւ սանդարս դիրքերն օգտագործելու զարմանալի հմտությամբ, հույները արժանի հաղթանակ տոնեցին: Խաղի 57-րդ րոպեին անկյունայինի խաղարկումից հետո Խարիստեասի խփած միակ գնդակը հույներին Եվրոպայի չեմպիոնի տիտղոսին արժանացրեց: Ավելորդ չէ նշել, որ այդ հաջողությանն ինչ-որ չափով նպաստել է նաեւ... Հայաստանի հավաքականը, որը հույների հետ ընդգրկված էր Եվրոպայի առաջնության ընտրական միեւնույն խմբում: Եվ հայերի նկատմամբ տոնած երկու հաղթանակների շնորհիվ հույները Պորտուգալիայի ուղեգիր նվաճեցին: Շատ լեզուներն ասում են, որ հույներն անցած տարի իզուր չէին 1 մլն դոլար առաջարկել Հայաստանի ընտրանուն Երեւանում 3 միավոր վաստակելու համար, նախապես զգալով, որ այդ ծախսը Եվրոպայի առաջնությունում լիովին կփոխհատուցվի:

Ինչեւէ, Հունաստանի հավաքականը եվրոպական առաջատար ընտրանիների հետ մրցավեճում կարողացավ գերազանցել մրցակիցներին եւ արժանիորեն նվաճեց չեմպիոնի ոսկե մեդալները: Հիշենք Եվրոպայի չեմպիոն Ֆրանսիացիների հանդիպումը, որում ի դեպ, հաղթական գնդակը եւս խփել էր Խարիստեասը: Իսկ կիսաեզրափակիչում հույները լրացուցիչ ժամանակում կրկին հաջող իրացրին սանդարս դրությունը եւ Դելասը եզրափակիչի ուղեգիր պարգեւեց թիմին:

Թիմի հաջողությունում, անշուշտ, անգնահատելի է գերմանացի մասնագետ Օսսի Ռեհագելի դերը, որին հաջողվեց մեկ թիմում համախմբել Հունաստանի բոլոր ուժեղագույն ֆուտբոլիստներին, բարձրացնել խաղային կարգապահությունը, խաղացողների անհատական վարպետությունը ծառայեցնել թիմային ընդհանուր շահին:

Բնականաբար, խաղից հետո իր սաների հետ ցնծում էր նաեւ **Օսսի Ռեհագելը**. «Հունաստանը մտավ ֆուտբոլի պատմության մեջ: Սա բացառիկ նվաճում է հունական եւ եվրոպական ֆուտբոլի պատմության մեջ: Մենք շատ լավ խաղ անցկացրինք եւ արժանի հաղթանակ տոնեցինք: Տեխնիկապես մրցակիցը գերազանցում էր մեզ, սակայն մենք օգտագործեցինք գոլային հարմար պահը եւ գոլ խփեցինք: Կարող էինք հաղթել նաեւ 2-0 հաշվով: Հունաստանն այսօր իսկական անակնկալ մատուցեց: Երբ ես գլխավորեցի հավաքականը, ֆուտբոլիստներից յուրաքանչյուրը խաղում էր այնպես, ինչպես իրեն դուր էր գալիս: Այժմ նրանք կատարում են այն, ինչն անհրաժեշտ է: Սովորաբար հույները աչի էին ընկնում անհատական վարպետությամբ, իսկ այժմ նրանք ուժեղ են նաեւ կոլեկտիվ խաղում: Մենք 3 տարի շարունակ լավ աշխատել ենք հանուն այսօրվա հաղթանակի: Հավաքականը պայքարում էր եռանդով՝ ցուցաբերելով թիմային կամք ու վճռականություն, կատարելով առաջադրանքը: Անկասկած, Եվրո-2004-ում հաղթանակն ինձ համար առանձնահատուկ է»:

Իսկ ահա Պորտուգալիայի հավաքականի գլխավոր մարզիչ **Լուիս Ֆելիպե Սկոլարին** ներողամտություն է հայցել երկրպագուներից. «Մենք պորտուգալացի ժողովրդից ներողություն ենք խնդրում, որ չկարողացանք նվաճել Եվրոպայի չեմպիոնի տիտղոսը: Հույները ապավինել էին պաշտպանությանը: Չեմ կարծում, որ դա հետընթաց քայլ է: Մենք չկարողացանք դիմագրավել հույներին: Այն հավաքականները, որոնք հարձակողական ոճ են դավանում, պետք է հույների խաղի հակաթույնը գտնեն: Մենք ավելի շատ էինք տիրում գնդակին, ավելի շատ հարվածներ կատարեցինք մրցակցի դարպասին, սակայն մրցակիցն ավելի էֆեկտիվ անցկացրեց հանդիպումը եւ հաղթեց: Ցանկանում եմ շնորհավորել Հունաստանի հավաքականի մարզչին եւ ֆուտբոլիստներին արժանի հաղթանակի առթիվ: Մենք դարձանք փոխչեմպիոն եւ եթե շարունակենք նույն ոճով աշխատել, ապա շուտով մենք էլ հաղթանակներ կտոնենք խոշոր մրցաշարերում»:

Զագորակիսը Եվրո-2004-ի լավագույն ֆուտբոլիստ

Հունաստանի հավաքականի ավագ Թեոդորոս Զագորակիսը ճանաչվել է Եվրո-2004-ի լավագույն ֆուտբոլիստ: Նման որոշում է կայացրել հատուկ ժյուրին, որի կազմում էին Ռոյ Խոջսոնը, Ժերար Ուլյեն, Անգել Յորդանեսկուն, Յոզեֆ Վենգլոսը, Բերտի Ֆոգտսը եւ Էնդի Ռոկսբուրգը: Հաշվի են առնվել նաեւ ՈՒԵՖԱ-ի ինտերնետային սայթում անցկացված հարցման արդյունքները: Զագորակիսին հատուկ մրցանակը կհանձնվի օգոստոսի 26-ին Մոնակոյում կայանալիք հանդիսավոր արարողության ժամանակ:

Որոշվել է նաեւ Եվրո-2004-ի խորհրդանշական հավաքականը, որի կազմում ընդգրկվել են 23 ֆուտբոլիստներ: Ահա այն.

Դարպասապահներ՝ Պետր Չեխ (Չեխիա), Անտոնիոս Նիկոպոլիդիս (Հունաստան):

Պաշտպաններ՝ Սոլ Կեմպբել, Էշլի Կոուլ (երկուսն էլ՝ Անգլիա), Տրայանոս Դելաս, Յուրկաս Սեյսարիդիս (երկուսն էլ՝ Հունաստան), Ուլոֆ Մելբերգ (Շվեդիա), Ռիկարդու Կարվալյու (Պորտուգալիա), Ջանլուկա Զամբրոտա (Իտալիա):

Կիսապաշտպաններ՝ Միխայիլ Բալլակ (Գերմանիա), Լուիս Ֆիգու (Պորտուգալիա), Ֆրենկ Լեմպարդ (Անգլիա), Մանիշե (Պորտուգալիա), Պավել Նեդվեդ (Չեխիա), Թեոդորոս Զագորակիս (Հունաստան), Զինեդին Զիդան (Ֆրանսիա):

Հարձակվողներ՝ Միլան Բարոշ (Չեխիա), Անգելոս Խարիստեաս (Հունաստան), Հենրիկ Լարսոն (Շվեդիա), Քրիսթիանու Ռոնալդու (Պորտուգալիա), Ուեյն Ռունի (Անգլիա), Յոն դալ Թոմասոն (Դանիա), Ռուդ վան Նիստելրոյ (Հոլանդիա):

Անհաջողակների հավաքականը

ESPN հեռուստաընկերությունը հրապարակել է Եվրո-2004-ի անհաջողակների խորհրդանշական հավաքականի կազմը: Հավաքականը գլխավորելու պատիվը վստահվել է Իսպանիայի ընտրանու այժմ արդեն նախկին մարզիչ Ինյակի Սաեսին: Յուրօրինակ այդ հավաքականի դարպասապահն է անգլիացի Դեվիդ Ջեյմսը: Պաշտպաններն են պորտուգալացի Պաուլու Ֆերեյրան, ֆրանսիացիներ Մարսել Դեսային ու Միխայել Սիլվեստրը, գերմանացի Յենս Նովոտնին: Կիսապաշտպանական օղակը կազմել են անգլիացի Դեյվիդ Բեքհեմը, բուլղարացի Ստիլյան Պետրովը, հոլանդացի Ֆիլիպ Կոկուն: Հարձակվողների եռյակն այսպիսին է՝ Քրիսթիան Վիերի, Ֆրանչեսկո Տոտի (երկուսն էլ՝ Իտալիա), Ռաուլ Գոնսալես (Իսպանիա):

Օուենը մնում է «Լիվերպուլում»

«Լիվերպուլի» հարձակվող Մայքլ Օուենը վճռել է շարունակել ելույթները հարազատ կոլեկտիվում: Մինչ այդ նա բազմիցս հայտարարել էր, որ եթե թիմը չեմպիոնների լիգայի ուղեգիր չնվաճի, ապա կհեռանա ակումբից: Թիմի նոր գլխավոր մարզիչ Ռաֆայել Բենիտեսին հաջողվել է համոզել Օուենին մնալ «Լիվերպուլում»: Մոտ օրերս Օուենը երկամյա նոր պայմանագիր կկնքի ակումբի հետ, համաձայն որի շաբաթական 80 հազար ֆունտ ստեռլինգ կստանա: Այսպիսով, Օուենը կրկին կլինի թիմի ամենաբարձր վարձատրվող ֆուտբոլիստը:

«Լիվերպուլի» նոր գլխավոր մարզիչը նաեւ համոզել էր թիմի առաջատար կիսապաշտպան Սթիվեն Ջերարդին երկարաձգել պայմանագիրը: Նոր մրցաշրջանում Մայքլ Օուենին հարկ կլինի Եվրո-2004-ի լավագույն ռմբարկու Միլան Բարոշի հետ պայքարել հիմնական կազմում թիմի նորեկ Ջիբրիլ Սիսեի հետ հարձակման երկյակ կազմելու համար:

Վասեժը Ալժիրի հավաքականի մարզիչ

Բելգիացի մասնագետ Ոբեր Վասեժը, որն աշխարհի 2002 թ. առաջնությունում գլխավորում էր իր երկրի հավաքականը, ստանձնել է Ալժիրի ընտրանու ղեկը: Նա երկամյա պայմանագիր է կնքել: Գլխավոր մարզչի պաշտոնում Վասեժը կփոխարինի Ռաբախ Սադանային, որը հրաժարական էր տվել Աֆրիկայի գավաթի խաղարկության քառորդ եզրափակիչում Թունիսի ընտրանուց կրած պարտությունից հետո (1-3): Վասեժի առջեւ խնդիր է դրված հավաքականի հետ աշխարհի առաջնության ուղեգիր նվաճել:

«Փյունիկին» հաղթանակը դժվարությամբ տվեց

Առաջնության 13-րդ տուրում եվրոգավաթների մասնակից մեր չորս թիմերը հանդիպում էին միմյանց հետ: «Բանանցի» եւ «Փյունիկի» մրցավեճն անցավ բավական հետաքրքրական ու դիտարժան պայքարում: Ի տարբերություն նախորդ հանդիպումների, «Բանանցն» այս անգամ, հատկապես առաջին խաղակեսում բավական ագրեսիվ խաղ ցուցադրեց՝ մի քանի վտանգավոր պահեր ստեղծելով մրցակցի դարպասին: Հանդիպման 24-րդ րոպեին չափազանց գեղեցիկ գոլի հեղինակ դարձավ «Բանանցի» ավագ Հովհաննես Դեմիրճյանը՝ մոտ 22 մետրից տուգանային հարվածով գնդակն ուղարկելով դարպասի վերին անկյունը: 30-րդ րոպեին Կոնդրաչենկոն հայտնվեց հարվածային դիրքում, փորձեց հարվածել, բայց պաշտպանի հետ պայքարում վայր ընկավ: Մրցավար Արարատ Ճաղարյանը չհամարձակվեց 11 մ նշանակել: Առաջին խաղակեսի ավարտին էլ Արշակ Ամիրյանի տուգանային հարվածից հետո Բետեն դժվարությամբ որսաց գնդակը: «Փյունիկն» էլ մի քանի անգամ փորձեց հաջողության հասնել, սակայն ապարդյուն:

Ընդմիջումից հետո Արթուր Մկրտչյանի փոխարեն խաղադաշտ դուրս եկավ Գալուստ Պետրոսյանը՝ ուժեղացնելով հարձակման գիծը: «Բանանցը» գրեթե ողջ կազմով նահանջեց սեփական կիսադաշտը՝ ձգտելով պահպանել հաղթական հաշիվը: Սկզբում դա «Բանանցին» հաջողվում էր, սակայն երբ անհասկանալի պատճառով փոխարինվեց Հովհաննես Դեմիրճյանը, մեկ րոպե անց Գալուստ Պետրոսյանը հավասարեցրեց հաշիվը, իսկ այնուհետեւ Մանուչարյանն առաջ մղեց «Փյունիկին»: Ավելացված ժամանակում էլ կրկին աչի ընկավ Գալուստ Պետրոսյանը՝ ամրագրելով թիմի հաղթանակը (3-1):

Նախորդ տուրում «Միկայից» խոշոր հաշվով պարտություն կրած արարատցիներն ընթացիկ առաջնությունում խոշոր հաշվով անդրանիկ հաղթանակը տոնեցին՝ նման ձեւով նշելով իրենց հոբելյանական՝ 300-րդ խաղը Հայաստանի առաջնություններում: «Արարատը» 5-1 հաշվով հաղթեց «Կոտայքին»: Աչի ընկավ Մհեր Ավանեսյանը՝ դառնալով «հեթ-տրիկի» հեղինակ եւ խփելով պատասխանական մրցումներում 100-րդ գոլը: Մեկական գնդակ խփեցին թիմի լեգեոներներ Ռենատոն եւ Ուզոմեմը: «Կոտայքից» միակ գնդակը խփեց Վահագն Մինասյանը:

«Դինամո-Զենիթի» ֆուտբոլիստները 1-0 հաշվով հաղթեցին «Կիլիկիային»: Միակ գնդակը 50-րդ րոպեին խփեց Լեւոն Սարգսյանը: Գյումրիում մրցեցին եվրոգավաթների մասնակից մեր մյուս երկու թիմերը՝ «Շիրակն» ու «Միկան»: Հանդիպման 7-րդ րոպեին Դավիթ Գրիգորյանի խփած միակ գնդակը հաղթանակ պարգեւեց «Միկային»:

Մրցաշարային աղյուսակ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Փյունիկ	12	9	3	0	35-11	30
2. Միկա	13	9	2	2	21-13	29
3. Արարատ	13	6	4	3	22-17	22
4. Դ.-Զենիթ	13	5	5	3	14-15	20
5. Բանանց	12	5	2	5	13-16	17
6. Կիլիկիա	13	3	2	8	15-19	11
7. Շիրակ	13	1	4	8	11-22	7
8. Կոտայք	13	1	2	10	12-30	5

Ռմբարկուները

Նշան Էրզրումյան	«Կիլիկիա»	10
Էդգար Մանուչարյան	«Փյունիկ»	9
Գալուստ Պետրոսյան	«Փյունիկ»	9
Արմեն Շահգելդյան	«Միկա»	8
Մհեր Ավանեսյան	«Արարատ»	7
Լեւոն Փաչաջյան	«Փյունիկ»	6

Որոշվեցին Ուիմբլդոնի դափնեկիրները



Ուիմբլդոնում ավարտվեց «Մեծ սաղավարտ» մրցանակի խաղարկության այս տարվա 3-րդ մրցաշարը: Կրկին հաջողության հասան Ռուսաստանի ներկայացուցիչները: Կանանց մրցաշարի հաղթող ճանաչվեց Մարիա Շարապովան: 17-ամյա թենիսիստուհին 6-1, 6-4 հաշվով պարտության մատնեց մի շարք տիտղոսների հեղինակ Սերենա Ուիլյամսին եւ առաջին անգամ նվաճեց Ուիմբլդոնի չեմպիոնուհու կոչումը: Հիշեցնենք, որ մինչ այդ Ֆրանսիայի բաց առաջնությունում հաջողության էր հասել Անաստասիա Միսկինան: Այնպես որ, ռուսական կանանց թենիսն առաջատար դիրքեր է զբաղեցնում այս մրցաձեւում, ինչը չի կարելի ասել տղամարդկանց մասին: Այստեղ հաջողության հասավ զվեյցարացի Ռոժե Ֆեդերերը, որը պարտության մատնեց ամերիկացի Էնդի Ռոդիկին (4-6, 7-5, 7-6, 6-4): Ընթացիկ մրցաշրջանում դա «Մեծ սաղավարտի» մրցաշարերում Ֆեդերերի 2-րդ հաջողությունն էր: Հունվարին նա հաղթող էր ճանաչվել Ավստրալիայի բաց առաջնությունում: Տղամարդկանց զուգախաղում հաջողությունն ուղեկցեց Յոնաս Բյորկմանին ու Թոդ Վուդբրիջին, որոնք պարտության մատնեցին Ջուլիան Նոուլ-Նենադ Զիմոնջիչ զույգին (6-3, 7-5): Կանանց զուգախաղում հաջողության հասան Կարա Բլեքն ու Ռենե Ստաբզը, որոնք հաղթեցին Լիզել Խուբեր-Այի Սուգիյամա զույգին (6-3, 7-6): Խառը զուգախաղում Ուեյն եւ Կարա Բլեքներն առավելության հասան Թոդ Վուդբրիջի եւ Ալիսիա Մոլիկի նկատմամբ (3-6, 7-6, 6-4):

Եզրափակիչում Ադամսն ու Կասիմջանովը

Հայտնի դարձան Տրիպոլիում ընթացող ըախմատի տղամարդկանց աշխարհի առաջնության եզրափակիչի մասնակիցները: Աշխարհի չեմպիոնի տիտղոսը կվիճարկեն անգլիացի Մայքլ Ադամսն ու ուզբեկ գրոսմայստեր Ռուսլան Կասիմջանովը: Առաջինը եզրափակիչի ուղեգիր նվաճեց Ադամսը, որը Թեյմուր Ռաջաբովի հետ չորս պարտիայից բաղկացած մրցամարտը շահեց 2,5-1,5 հաշվով: Առաջին պարտիայում սեւերով հաղթելով մրցակցին, Ադամսը հաջորդ 3 պարտիաներն ավարտեց ոչ-ոքի:

Ավելի համառ ու անզիջում մրցապայքար ծավալվեց բուլղարացի Վեսելին Թոփալովի եւ Ռուսլան Կասիմջանովի միջեւ: Դասական ըախմատի կանոններով բոլոր չորս պարտիաներն էլ խաղաղ ելք ունեցան: Իսկ ահա, արագ ըախմատի կանոններով երկու պարտիաներում էլ հաջողությունն ուղեկցեց Կասիմջանովին: Հետաքրքրական է, որ մինչ այդ Թոփալովը 10 պարտիաներում կորցրել էր ընդամենը կես միավոր:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Օրվա հեռագրով

ՕՊԵՐԱՏԻՎ ՏՎՅԱԼՆԵՐ

Սպանություն

Ինչպես տեղեկացանք ՀՀ ոստիկանության հասարակայնության հետ կապերի եւ լրատվության վարչության տրամադրած օպերատիվ տեղեկագրից, հուլիսի 3-ին ոստիկանության Արթիկի բաժին հիվանդանոցից հաղորդվել է, որ որովայնի մասում սուր կսրող գործիքից ստացած վնասվածքով իրենց մոտ է տեղափոխվել 1976 թ. ծնված Սոյարսակ Պաղոյանի դիակը: Սպանություն կատարելու կասկածանքով բերման է ենթարկվել 1951 թ. ծնված Ռուբիկ Հ.-ն: Վերջինս նույն օրը Անկախության փողոցի շենքերից մեկի մոտ վիճաբանության ժամանակ դանակահարել եւ մարմնական վնասվածք է պատճառել Սոյարսակին, որից վերջինս մահացել է: Դանակն առգրավված է, Ռուբիկ Հ.-ն ձերբակալված է, քննությունը վարում է դատախազությունը:

Դանակահարություն

Հուլիսի 2-ին ոստիկանության Մալաթիա բաժնի աշխատակիցները մարմնական վնասվածք հասցնելու կասկածանքով բերման են ենթարկել 1967 թ. ծնված, նախկինում դատված Ալեքսանդր Օ.-ին: Վերջինս հուլիսի 1-ին Ռաֆֆու փողոցի շենքերից մեկի աստիճանահարթակում վիճաբանության ժամանակ դանակահարել եւ մարմնական վնասվածք է պատճառել Կարեն Կ.-ին: Դանակն առգրավված է, Ալեքսանդր Օ.-ն ձերբակալված է, կատարվում է նախաքննություն:

Հուլիսի 2-ին ոստիկանության Գավառի բաժնի աշխատակիցները մարմնական վնասվածք հասցնելու կասկածանքով բերման են ենթարկել 1982 թ. ծնված Արթուր Մ.-ին: Վերջինս հունիսի 29-ին, Նորադուզ գյուղի «Ավազի հանք» տարածքում, Սեւանա լճի ափին վիճաբանության ժամանակ դանակահարել եւ մարմնական վնասվածք է պատճառել Դավլեթ Հ.-ին: Կատարվում է նախաքննություն:

Հուլիսի 5-ին տրանսպորտային վարչության «Շիրակ» օդանավակայանի դիսպետչերական ծառայությունից ահազանգ է ստացվել, որ Գյումրի-Մոսկվա չվերթի ինքնաթիռը չի կարողանում թռչել: Ոստիկանության աշխատակիցներին դիմադրություն ցույց տալու կասկածանքով բերման է ենթարկվել 1948 թ. ծնված, ՌԴ քաղաքացի Գեորգ Պ.-ն: Վերջինս գտնվելով ոչ սթափ վիճակում, չենթարկվելով ոստիկանության աշխատակիցների օրինական պահանջներին, խուլիգանական արարքներ է կատարել ինքնաթիռի անձնակազմի եւ ուղեւորների նկատմամբ: Քննությունը վարում է դատախազությունը:

Հրազդանի ՀԷԿ-ի ջրանցքից հանվել է դիակ

Արտակարգ իրավիճակների վարչության լրատվության կենտրոնի օպերատիվ տեղեկագրից տեղեկանում ենք, որ հուլիսի 2-ին ահազանգ է ստացվել, որ Հրազդանի ՀԷԿ-ի ջրանցքում խեղդվել է ՀՀ ոստիկանության զորքերի զինծառայողներից մեկը: Դեմքի վայր մեկնած ԱԻՎ փրկարարական խումբը եւ փրկարարական ուսումնական կենտրոնի ջրասուզակները ջրանցքից հանել են 1984 թ. ծնված Ռոմիկ Բուռնոյանի դիակը:

Վառերքից մահացել է 58-ամյա Ասյա Գրիգորյանը

Հուլիսի 3-ին Երեւան-Գյումրի ավտոճանապարհի 14 կմ-ում, Ուջան գյուղի մոտակայքում, Կոտայքի մարզի Ջրվեժ գյուղի բնակիչ, 42-ամյա Անդրանիկ Գրիգորյանն իր «Կվզ» ավտոմեքենայով վառերքի է ենթարկել Արագածոտնի մարզի Կոշ գյուղի բնակչուհի, 58-ամյա Ասյա Գրիգորյանին: Տուժածը գանգի կոտրվածքով եւ գլխուղեղի սալջարդով տեղափոխվել է Աշտարակի հիվանդանոց, որտեղ նրան ցույց է տրվել բուժօգնություն, սակայն տուժածի կյանքը փրկել չի հաջողվել:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՍԿԱՐՅԱՆ

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԻՍԿԱՅԻ ԲԱՆԿ

Դրամավարկային տեղեկատու

Հունիսի 25-ից հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածում դրամավարկային ցուցանիշները հետեւյալն էին.

Դրամական բազա, դրամական զանգված

Փողի բազան աճել է 1 մլրդ 594 մլն դրամով եւ հուլիսի 1-ին կազմել 107 մլրդ 647 մլն դրամ: Զուտ արտաքին ակտիվները (առանց սեփականաշնորհման միջոցների) նվազել են 824 մլն դրամով, իսկ զուտ ներքին ակտիվներն աճել են 770 մլն դրամով:

Հունիսի 18-25-ն ընկած ժամանակահատվածում փողի զանգվածը աճել է 64 մլն դրամով եւ հունիսի 25-ին կազմել 231 մլրդ 512 մլն դրամ (ընդգրկված են 19 բանկերի ցուցանիշները): Շրջանառության մեջ կանխիկ դրամը նախորդ շաբաթվա համեմատ աճել է 1 մլրդ 582 մլն դրամով, կազմելով 82 մլրդ 241 մլն դրամ: Դրամով ցպահանջ ավանդները աճել են 1 մլրդ 595 մլն դրամով եւ կազմել 30 մլրդ 61 մլն դրամ: Դրամով ժամկետային ավանդները նվազել են 1 մլրդ 637 մլն դրամով եւ կազմել 12 մլրդ 546 մլն դրամ: Արտարժույթով ավանդները նվազել են 1 մլրդ 476 մլն դրամով եւ կազմել 106 մլրդ 664 մլն դրամին համարժեք արտարժույթ: Ընդ որում, արտարժութային ցպահանջ ավանդները կազմել են 53 մլրդ 309 մլն դրամ (նախորդ շաբաթվա համեմատ նվազել են 1 մլրդ 694 մլն դրամով), ժամկետայինները՝ 53 մլրդ 355 մլն դրամ (աճը՝ 218 մլն դրամ):

Ֆինանսական շուկա

Հունիսի 25-ից հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածում թողարկվել է 500 մլն դրամի 47-շաբաթյա ՊՊ՝ 4,9411 տոկոս տարեկան եկամտաբերությամբ, եւ մարվել են 700 մլն դրամի 46-շաբաթյա ՊՊ՝ 10,5643 եւ 500 մլն դրամի 49-շաբաթյա ՊՊ՝ 10,5957 տոկոս տարեկան եկամտաբերությամբ:

Արտարժույթի շուկա

Հունիսի 25-ից հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածում ԱՄՆ դոլարի նկատմամբ փոխարժեքն արժեւավորվել է 0,89 տոկոսով՝ 539,25 դրամից հասնելով 534,49 դրամի:

Նշված ժամանակահատվածում արժութային շուկայում իրականացվել են շուրջ 38,858 հազ. ԱՄՆ դոլարի առք ու վաճառքի գործարքներ, որոնց միջին կշռված փոխարժեքը կազմել է 535,48 դրամ:

ՀՀ ԿԲ մամուլի ծառայություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՉԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԱՊՐԱՆՔՆԵՐԸ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

տեղեկագրքով, Ինտերնետով, CD-ով, հեռախոսով

ՍՓՅՈՒՌ տեղեկատվական ծառայություն

Երեւան, Փավստոս Բուզանդի 1/3, 7-րդ հարկ
Հեռ. 590000 www. spyur.am

«Թիկնաղաի» ֆոլեջ
կարդալ TV ալիք
շաբաթաթերթի
վերջին էջում

FOR YOUR INTERNAL NEWS
OF ARMENIA
LOG ON TO
www.azg.am,
IN ARMENIAN, RUSSIAN,
ENGLISH AND TURKISH

UNIBANK

до 31 августа

вклад

ОЛИМПИЙСКИЙ

12 месяцев

от 1000 USD

ежемесячная капитализация или выплата процентов

% ГОДОВЫХ

СТАНДАРТНЫЕ ВКЛАДЫ В ДРАМАХ И ВАЛЮТЕ

Срок вклада	Выплата процентов	AMD	USD, EURO
		До 5 млн.	До 10.000
до востребования		0*	0*
31 - 90 дней	в конце срока	7,5	5,5
	ежемесячно	7	5
91 - 182 дня	в конце срока	8	6,5
	ежемесячно	7,5	6
183 - 364 дня	в конце срока	8,5	7,5
	ежемесячно	8	7
365 - 550 дня	в конце срока	9	8
	ежемесячно	8,5	7,5

Вклады превышающие 5 млн. AMD или 10 тыс. USD, EURO и/или сроком более 550 дней - по индивидуальным ставкам.
* в отдельных случаях процентная ставка определяется на договорной основе

Минимальная сумма срочных депозитов
- 50.000 AMD
- 100 USD, EURO

АДРЕСА ФИЛИАЛОВ ЗАО "ЮНИБАНК"

Центральный офис:
г. Ереван, ул. Амиряна 12
тел: (3741) 539870
e-mail: unibank@unibank.am

Филиалы в г. Ереване:
Филиал "КЕНТРОН"
ул. Абовяна 26
тел: (3741) 542431
Филиал "МАЛАТИЯ"
ул. Себастия 141
тел: (3741) 776627
Филиал "КОМИТАС"
ул. Комитаса 15/2
тел: (3741) 261838

Филиалы в Армении:
Филиал "ВАНАДЗОР"
г. Ванадзор, ул. Тигран Мец 53
тел: (37451) 40872
Филиал "ГЮМРИ"
г. Гюмри, ул. Ахтанаки 1
тел: (37441) 33055

ЮНИБАНК
РЕАЛЬНЫЕ ИНВЕСТИЦИИ
53 98 70
www.unibank.am

ԳԻՏԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՄՐՑՈՒՅԹԻ ՀՐԱՎԵՐ

Ամերիկայի հայ օգնության ֆոնդի հովանու ներքո գործող Գիտության եւ կրթության հայկական ազգային հիմնադրամը (ԳԿՀԱՀ) Հայաստանի Հանրապետության գիտնականներին եւ հետազոտողներին հրավիրում է 2005 թ. գիտական դրամաշնորհների մրցույթի: Դրամաշնորհի չափը մինչեւ 5000 ԱՄՆ դոլար է:

Տպագիր դիմումները պետք է ներկայացվեն անգլերեն՝ ոչ փոքր, քան տպագրական 10 տառաչափով եւ ուղարկվեն էլեկտրոնային փոստով՝ չգիպավորված Microsoft Word ֆորմատով:

Բյուջեն ներառելու է թե՛ գլխավոր հետազոտողի, թե՛ մյուս մասնակիցների աշխատավարձերը, սարքավորումների գնման, ճանապարհորդական եւ այլ ծախսեր, նաեւ 5 տոկոս այն հաստատության վերադիր ծախսերը, որտեղ գիտական խումբն աշխատում է:

Գիտական դրամաշնորհների մրցույթի մասնակցության դիմումների վերջին ժամկետը 2004 թ. օգոստոսի 15-ն է: Արդյունքները հայտնի կդառնան սույն տարեվերջին, իսկ դրամաշնորհումը կկատարվի 2005 թ. հունվարին: Լրացուցիչ տեղեկություններ համար այցելել www.ansef.org/submissions2005/ ինտերնետային էջը:

ՀՕՖ-ի ԼՐԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության **բնապահպանության նախարարությունը** սույն թվականի հուլիսի 12-ին, երկուշաբթի, ժամը 11:00-ին Թեթեյան մշակութային կենտրոնում կազմակերպում է հասարակական քննարկում՝ նվիրված Հայաստանի Հանրապետության «Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» օրենքի նախագծին:

Քննարկման կազմակերպմանն աջակցում է ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության «Ջրային ռեսուրսների կայուն կառավարման ծրագիրը», որն իրականացվում է «ԷյԱրԴի» կազմակերպության կողմից:

Շահագրգիռ անձիք կարող են ստանալ օրենքի նախագիծը հետեւյալ հասցեներով.

ՀՀ բնապահպանության նախարարության ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն, Երեւան, Հանրապետության հրապարակ, Կառավարական շենք 3, 5-րդ հարկ, եւ «ԷյԱրԴի» գրասենյակ, Երեւան, Ալիխանյան փակուղի, տուն 7:

«Գինդ» տպագրատուն, Երեւան, Բագրատունեաց 70ա Գրանցման թիւ՝ 65, դասիչ՝ 69150 Տպաքանակը՝ 3000 Ստորագրված է տպագրության՝ 6.07.2004 Գինը՝ 100 դրամ